

ՈՐԳԵԳԻՐ ԿՈՒՍԻՆ

համ

ԴԱՐՉ ՄԸ.



Imprimerie de S. Benoit.

1844.





Մարտիրոսի և Կրիստոսի խոստովանանքի մասին պատմությունը



Այսպես էլ Կրիստոսի խոստովանանքը
Իսկ ինչպե՞ս խոստովանեմք :

25/

840-64

ՈՐՐԵՂԻՐ ԿՈՒՍԵՆ

ԿԱՄ

ԳԼԸՉ ՄԲ.



Տեղ ու այ է որ շնորհիկ իայ
վել յայժամ իսկա Խոյանանել
շնորհանոր աս շնորհանել
Երկե ինչ. Թ:

3494-52

Գինը . 60 փարայ է :

ԳՆԵԹԻԸ (Կ. Պոլս.)

Արքայն Բենեդիկտոսի Տպարանը:

1844.

Անկուրիչ գիրք մընայ հինայ տաճ-
 կերէն խօսքով կը աղագլի կտր Վանկը
 Լըրակնի, մէ Քրօթէսթանդ Քարպիչ,
 անունով, հաւատքի բաներուն վրայ,
 բր ասոր ետեւէն անմիջապէս անկեղայ
 ալ պիտի հրատարակի:

ՅԵՒԷՋԱԲԷՆՈՒԹԻՒՆ :

Մի, ընդհանրական ու սուրբ եկեղեցւոյն մէջը Մատուած անդադար հրաշքներ կընէ, ու իրեն պաշտպանութեանը ու սիրոյն երեւելի վկայութիւնները միշտ կըցըցընէ : Աւ ամենակարօղն Մատուած ամեն ժամանակ իրեն աներկբայելի նշաններովը մարդկանց ցըցուց ան ճշմարիտ տեղը՝ ուր որ տապանակ ուխտի ճշմարտութեան պահում է, բաւական է թէ՛ մարդիկ աշխարհին բանան, որպէս զի մեր օրը եղած յայտնի ու անթիւ նշանները տեսնան : Մայր եկեղեցիէն զատված եկեղեցիները որչափ որ հրաշքի

ու սրբոց կողմանէ զուրկ մնացեր են-
նէ, եկեղեցւոյ ճշմարիտ զաւակները օրէ
օր մեծ ու սքանչելի շնորհքներով կը-
ղօրանան ու կը մտի թարմին: Մն բիւրաւոր
շնորհքներուն մէջը՝ մէկնալ ան շնորհ-
քն է, որով ըսթրասպուրկցի հրէայ մը
Սասթիսպոն անունով դարձաւ ընդհան-
րական եկեղեցին մշտնեկով ուղղափառ
քրիստոնեայ եղաւ: Մ.ս հրէին գարծը
մեր միտքը կը ձգէ ան մեծ պաւղոս առա-
քեալը, որ Ղամասկոսի ճամբան գետի-
նը կործանեցաւ, երբոր կը մամաար որ
քրիստոնէից դէմ նոր հալածանքներ
հանէ:

Մ.ս հրէին քրիստոնեայ ըլլալուն՝ պատ-
ճառ եղաւ մէկ ազնուական ու մեծազգի
գաղղիացի մը պարոն Պիւսիէս որ անոր
քաղաքակիցն էր, ու քանի մը տարի
առաջ բրթթէսթանթներուն մոլար ազան-
դոյն մէջը գտնուէր էր: Ղայց ետքը

Ապրիլինին ու Վուտէրին նորահասար, հասկասական, ու հպարտական վարդապետութիւնները աշէկ մը քննելով, ճշմարտութիւնը ճանչցաւ, ու ուղղափառ եղաւ:

Աւասանկ ընելովք նմանօղ եղաւ այն հաղարաւոր գաղղիացի, գերմանացի, ու անգղիացի բրօթէսթանթներուն, որոնք սա դարուց սկիզբէն 'ի վէր նորէն իրենց հայրենական հաւատքը դարձան, ու իրենց այլանդակ ու անսովոր աղանդներէն հրաժարեցան:

Ըստ տեղս համաուստարսը ասալ կը գրուցեմ որ, եւրոպայի հիմնական կրօնական վիճակը ու կացութիւնը աղէկ գիացող մարդք ծիծաղախաուն գթութեամբ մը կը դարմանայ, երբօր կը անայ որ օտար մարդիկներ քարոզիչի կեղծեալ անուամբը՝ կուզեն անարածել մեր արեւելեան սիրելի քրիստոնէից մէջը անանկ վարդապետութիւններ, որ սուօր:

Վանօրս աւելի լուսաւորեալ տղգերը զանոնք չեն ընդունիր Արեւայ թէ՛ աս մարդիկները իրենց աւրած ու անարգ ապրանքները աս տեղս կրբերեն որ ծախեն, կամ անանկ ստակ մը՝ որ իրենց երկիրը չանցնիր :

Այսն զի քրիստոնէից մի և ընդհանրական հաւատքը օրէօր իրեն յաղթութիւնները բոլոր աշխրբիս մէջը՝ ինչպէս նոր աշխարհքին մէջը, ոգիկանեան կողմներուն մէջը, ու ինչպիսի նաց բաղմաթիւ դաւառներուն մէջը իրեն մարտիրոսաց արեամբը կը տարածէ :

Աստուծոյ աղաչենք, որ արեւելից ու արեւմտից բոլոր մոլորեալ քրիստոնեաները նորէն աս ընդհանրական ու սուրբ հաւատքը ընդունին, ու ամէնքը իրարու հետ անլուծանելի սիրով մը միանան. որպէս զի ատենօք ամէնքնալ միենդն հօր սիրելի զաւակներ ըլլան ինչպէս որ առաջ էիննէ : Ան

օրը ինչպիսի մեծ օր ցնծութեան ու
յաղթութեան պիտի սեպվի երկինքը սր-
բոց մէջ . ու երկրի վրայ՝ աստուածա-
հաճոյ և բարեպաշտ մարդիկներուն մէջ :
Պարօն Պիւսիէրը աս յամսու հրէսցին
Ուսթիսպոնը շահելու ու դարձրնելու
համար , ամմէն բանէն առաջ աս մի-
ջոցս կամ գիւտս գործածեց : Իրեն
երկու պղտիկ աղջիկներուն ձեռքովը
անոր վիզը անցրնել տրվաւ սուրբ Աու-
սին հրաշագործ միտալը , որնոր տաս-
վերկու տարիէն ՚ի վէր աշխարհքիս մէ-
ջը սյնչափ շատ հրաշքներ ըրաւ որ
անոնց վրայ մեկ մեծ գիրքմը շինվեցաւ :
Պէտք է որ աս տեղս ընթերցողաց աս
միտալին սկզբնաւորութիւնը պատմենք :
Յամին 1830 , սեպտեմբեր ամսուն մէջ
կուսանքներուն մէկը (ան կուսանքնե-
րուն կարգէն , որ ասօրվան օրս իզմիրի
ու զալաթիայու մէջ աղջիկները կը կրթեն :

ու իրենց բարեպաշտութեամբը ամեն
նուն բարի օրինակ կուտան) առտու մը
կկեղեցիին մէջը աղօթք ըրած ատենը
մէկէնիմէկ աչքին սասուածածնայ անա-
բատ յղութեան պատկերք մը կրեցաւ ,
ուրի վրայ կեցած , ճերմակ լաթ հա-
գած , ու վրան երկնագոյն կապուտ վե-
րարկու մը առած . ու գլուխը կտրմբա-
զոյն լաշակ մը . թեկերը բաց ու դէպ 'ի
դեաինը երկնցած , ու ձեռվրները ան-
դամանդ քարերով լեցուն էր . որոնցմէ
ցնցուղի պէս լուսաւոր ճառագայթներ
կըրղխէին . ու երկրագնացոյս վրայ կեր-
կըննային . բայց երկրագնացոյս դէպ 'ի
մէկ կողմը աւելի առատութեամբ մը :

Ըն վայրկեանին մէջը մէկ ձայն մը-
նալ լսեց , որ իրեն կըսէր :

« Ըս ճառագայթները այն շնորհք-
« ներուն նշանակն է , որնոր Մարիամ
« մարդկանց կըրաշխէ , ու երկրագնացոյս

« ան կէտը որուն վրայ ան ճառագայթ-
« ները աւելի առատութեանը մը կիջ-
« նան, գաղղիա է : »

« Ըն պատկերքին բոլորափրը առ յե-
տագայ աղօթքը գրված էր սակի գրով :
Սարիամ Այս որ Ընարատ Յզացար ,
Բարեխօսեա Սասն Ըգտինեըցս 'ի
Վեղ :

Վանի մը վայրկեանէն ետքը , պատ-
կերը գարձաւ , պատկերքին մէկալ կող-
մը Ս գիրը գրված էր , որ Մարիամ
բառին առաջին գիրն է , ու վրան պղ-
տիկ խաչ մը կար , ու անոր տակը եր-
կու սիրտ քովէքով որ կընշանակէին
Յիսուսի և Մարիամու սուրբ սիրտերը :
Արբոր առ նորընծայն ուշադրութեամբ
մը զանիկայ կը գննէր , նորէն ձայն մը-
նալ լսեց որ կրտէր - « Ըս ձեով մի-
« տալ մը կոխելու է , ու ով որ զասի-
« կայ վրան պահէ , ու ջերմեանդու-

« Թեամբ աս կարճ աղօթքը գրուցելու
« ըլլայ նէ, աստուածամօր մասնաւոր
« պաշտպանութիւնը կը վայելէ : »

Աս միտալը կոխվածին պէս, սկսաւ
տարածվելու. մանաւանդ կուսանաց մէջ.
Վասն զի անոնք աս միտալիս սկզբնառո-
րութեանը աղէկ տեղեակ ըլլալով, մեծ
հաւատքով ու ջերմեռանդութեամբ վրա-
նին կը պահէին : Անոնք աս միտալը քանի
մը հիւանդի տրվին. հիւանդներուն վե-
ցը շուտ մը իրենց առողջութիւնը գտան :
Փարէզ քաղքին մէջը իրեք հիւանդ շու-
տով ու անանկ կերպով մը ըոքնացան.
որ իրեք անհաւատալ ասիկայ տես-
նելով հաւատքի եկան : Ան ատենը ամ-
մէնքը սկսան շր ա շ ա գ ո Ր ծ կամ
բ ժ շ կ ա Ր ա Ր միտալը փնտռելու : Մարք
զանիկայ իրենց զաւակացը կուտային,
ու տեսարք իրենց ծառայիցը : Աւ գաղ-
ղիոյ քանի մի քաղքին մէջ, երիտասար-

դները զանիկայ իրենց վրայ կը պահէին
իրբե. պահապան երիտասարդութեան և
գրաւ փրկութեան : Թերահաստ քրիս-
տոնեաները, խտասիրտ մեղաւորները,
բրօթէսթանթները, անօրէն մարդիկնե-
րը, ու հրէայները իրենց կամաւը առ
միտալը կուղէին. սիրով կընդունէին.
ու կրօնական պատուով մը զանիկայ վրա-
նին կը պահէին :

Աս միտալը շուտով մը ամեն տեղ առ-
բածեցաւ. Օվեցցէրի, Խտալիայի, Արան-
եսայի, Պէլճիքոյի, Ինկիլթէռոսայի, Ա-
մերիգոյի. ու ինչպան Չինուամաչինի մէջ
(1) : Ասանկըլալէն ետքը պէտքէ որ արե-

(1) Աս Միտալիս շատ տարածվելը՝ տղէկ մը հաս-
կընալու համար, բաւական է թէ պարան Վալէթին
վաճառագիրքը աչքէ անցնենք. վասն զի սա մի-
տալները առաջ անիկայ կսկեց : Ասոր գիրքէն կը
հասկըցօ՞ր որ, տասը տարիէն ՚ի վեր միայն ինքը 2 մի-
լիան արծաթ ու ոսկի միտալ ծախել է. 18 միլիան
ալ սղինձ միտալ : Ասոր երէքպատիկնայ տրիշ-

ւելքնալ աս միտալիս յարդը գիտնայ՝
որ օրհնութիւնները վայելէ : Ալ որ աս
պատմութիւնս հաւատքով կարդալու ըւ-
լայնէ , աս միտալը միշտ վրանկըպահէ ,
ու քիչ ատենվան մէջ թագուհւոյն ողոր-
մութեանց պաշտպանութիւնը կըղգայ ու
կըտեսնայ :

ԵՂՕԹՔ ԵՌ ՍՈՒՐԻ ԿՈՅՍ ՄԵՐԻԱՄ

Ողջոյն Վեղ Մարիամ լի Շնորհօք :

Ալ սուրբ կոյս Մարիամ , դուն շնորհքով
լեցուն ես , ու քուկին մայրական սիր-
տըդ շնորհքով լցված ըլլալուն համար ,
կուզես որ այն շնորհքները մեր վրայալ
տարածես , անոր համար ինչպէս որ զա-
ւակ մը իւր մայրը , նոյնպէս ես ալ

ները ծախելեն փարիչի ու լինի մէջ անոր յանձ-
նադարութիւնը : Ասոնչմէ ՚ի զսա աս միտալս ու-
րիչ քաղաքներու ու դաւաաներու մէջալ խիստ
շատ կըկտիփի ու կըծափի :

ղքեզ զգթած մայրըդ կը համարձակիմ՝
ջերմեռանդ պատկառանք ողջունելու .
ինչպէս որ հրեշտակը ողջունեց : Տ է ը
ընդ քեզ : Աստուած քու հետդ է . ու
կուզէ որ քուկին միջնորդութեամբդ մեզի
իջնայ : Այլ սուրբ կոյս Մարիամ . քու
անունդ ամէն մաքուր զուարճութիւններ
րէն անուշ է . ամէն պատուական խուն-
կերէն քաղցրահոտ է . ու հրեշտակային
ներդաշնակութիւններէն աւելի զուարճա-
լի է . ու հաւատացեալ քրիստոնէին սր-
տին ու բերնին մէջը՝ հոգնած ճամբորդին
բերանընդած մեղրէն աւելի քաղցր է . ու
զղջացող մեղաւորին սրտին մէջը՝ արեւա-
կէզ ու չորցած տերեւներուն վրայի ե-
րեկոյեան ցօղէն աւելի անուշ ու նպաս-
տաւոր է : Դուն գիշերվան աստղին պէս
գեղեցիկ ես . դուն մոլորեալ ճամբորդը
նորէն իրեն ճամբան կը դարձրնես : Ար-
շաղոյսի պէս պայծառ ես , ու առաւօտեան

աստղին պէս քաղցր ու մաքրափայլ ևս,
ու դուն մարդկանց սրտին մէջը արդա-
րութեան արեգակէն առաջ կրծագիս :
Վուն ևս որ հերեփկոսութիւնները կը-
խորտակես ու կրվերցընես, անոր համար
բոթէսթանթները քեզմէ կրվախնան,
քու անուանդ հայհոյութիւն կընեն, ու
քու կին մշանջենաւոր կուսութիւնդ կու-
րանան : Ով սուրբ կոյս Մարիամ, ևս
քու կին գեղեցկութիւններդ ու մեծու-
թիւններդ չեմ կրնար պատմել, ու քու-
կին այնչափ մեծ փառքդ բացատրելու
կարողութիւն չունենալս ալ, ինձի մեծ
սպարճանք է :

Ով սուրբ կոյս Մարիամ, քու կին
անունովդ երկինք և երկիր կուրախա-
նան, ու գծսխքը անզօր բարկութեամբ
մը կըզողայ : Չէ չէ, չեկայ անանկ մէկ
խիտա մեծ կամ խիտա պզտիկ արարած
մը, որ քեզ իրեն օգնութիւն կանչէ

ու կորսըվի : Ըն մեծաշէն եկեղեցիները,
որնոր մեծամեծ ու բարեպաշտ ազգեր
քուկին անուանդ նուիրեցին . ան ոսկե-
ղէն նշանները , ու թագաւորական մե-
ծածախ գրօշակները ու նաև նաւապե-
տաց իրենց կարողութեանը չափ տուած
նուէրքները , որ ապառաժ լերանց մե-
ջը կամ ծովեղերքի վրայ շինված փոք-
րիկ մատուռներուդ մէջը կեցեր են . ու
քաթագօմպէին մէջը (1) մարտիրոսաց
ձեռքովը քաշված քուկին պղտիկ պատ-
կերքդ , որն որ ես աչքովս տեսայ , ա-
ստնք ամիէնը յայտնապէս կըվկայեն , որ
դուն կարողութիւն ունիս փոթորիկները
գաղընցընելու . ու աստուածային ողոր-
մութիւնը վար ինջեցընելու :

(1) Ըին քրիստոնէայնէրը հարածմանց ժամա-
նակը գեանի սակ փորված գերեզմաններու մէջ
աստուածային պաշտօն կըկատարէին . այս գե-
րեզմաններուն քաթագօմպէ կըսեն :

Այլ սուրբ կոյս Մարիամ, ևս անանկ վայրենի անապատներ տեսայ որ, քուկին անուանդ համար ծաղկեցան ու շնորհքով զարդարվեցան : Ան աստուածասէր ու առանձնակեաց բնակիչները քուկին փառքըդ կերդէին, լերանց արձագանքները, ու գետոց ալիքներնալ փոխադարձ փափաքով մը՝ քուկին օրհնութիւններդ կը կրկնէին :

Աս անանկ զբօսասէր քաղաքներ ու տուններ տեսայ որ քուկին անուանդ հովանաւորութեամբը ազնիւ ու մաքուր առաքինութիւններով զարդարվեցան : Աս այնպիսի անձնասէր ու ազատարոյ երիտասարդներ տեսայ, որ քուկին անունդ, տօնախմբութիւնդ ու ծառայութիւնդ, ամմէն մեծամեծ շահերէն, պատիւներէն, ու աշխրքիս ամմէն զբօսանքներէն մեծ սեպեցին :

Աս քանի մը վաթսուն ու ութսուն

տարեկան անհաւատ ու մոլի ծերեր
անսայ, որ իրենց թշուառութեան մէ-
ջը քուկին անուանգ զօրութեամբը՝
խելքերնին գլուխնին եկաւ, յիշեցին
զաստուած, որն որ իրենց առաջին տղայ-
ութիւնը օրհներ էր. ու դուն՝ անոնց
վերջին ժամուն մէջը անոնց կերեայիր
իրրե նշան ազատութեան և խաղաղու-
թեան յաւիտենական կենաց համար :

Ավ սուրբ կոյս Մարիամ, ուրեմն
դուն ով ես :

Ավ է ՄԱ : Դուն մեր փրկչին մայրն
ես. ու Յիսուս որովայնիդ պտուղը Աս-
տուած մընէ օրհնեալ յաւիտեանս յա-
ւիտենից : Դուն մեր բոյրն ես. ու մեզի
պէս ադամայ զաւակն ես. բայց դուն
մեր ողորմելի ժառանգութեանը բնաւ
մասնակից չեղար. ու դուն մեր թշուա-
ռութիւնները տեսնալով գորովագութ
կարեկցութեամբ մը մեր վրայ կըգթաս :

Ո՛վ սուրբ կոյս Մարիամ, դուն աստուածային կարողութեան խիստ գերազանց գործքն ես. դուն աստուածային բարութեանը պինտ օգտակար դիւան ես : Դուն աստուածային ողորմութեանը տմենաբազցր ու անգին պարգևն ես .

Ո՛վ Աստուած իմ, սուրբ կոյս Մարիամը տեսնալու համար աչք չունեցողներուն, անանկ աչք մը տուր, որ անոր մայրական նայուածքին լոյսը տեսնան, ու հասկընան : Սուրբ կոյս Մարիամը սիրելու համար սիրա չունեցողներուն, անանկ սիրտ մը տուր, որ զանիկայ սիրեն. վասն զի սուրբ կոյս Մարիամին ու Յիսուսին, քի Մօրը ու զաւակին մէջ տեղը՝ մէկ ռանաչափ միջոց մը կայ :

Անսխալելի միջոցներուն մէկը որով մէկ մարդ մը սուրբ կուսէն ամմէն ուզած շնորհքները կրնայ ընդունիլ, աս յետագայ կարճ աղօթքս է, որն որ սուրբ

Լեւրնարդոսը շինեց է. ու պէտք է որ
ամենքսալ զանիկայ բերան սորվինք.
Վասն զի պատմելու հրաշքիս առաջին
պատճառը՝ ան աղօթքն է :

ՍՈՒՐԲ ԲԵՐՆԱՐԴՈՍԻՆ ԱՂՕԹՔԸ:

Յիշեա ով ամենագութ կոյս Մարի-
ամ, եթէ բնաւ չէ լսված, որ քուկին
գերագահ պաշտպանութեանդ ապաւի-
նօղը, քուկին օգնութիւնդ խնդրօղը,
ու քուկին շնորհարաշխ խնամոցդ զինքը
յանձնօղը քու երեսէդ ինկած ըլլայ :
Ես այսպիսի զօրաւոր յոյս մը ունենա-
լով, քեզի կը վազեմ կուգամ, ով կոյս
կուսանաց և մայր մեր. ու զզջացօղ մե-
ղաւորի պէս քու առջևդ կը կայնիմ, ու
կը հեծեմ : Ավ մայր Մանին, մի արհա-
մարհեր զբանս իմ. այլ լսէ մարգասի-
րութեամբ, ու ընդունէ իմին խնդրուածքս
ամէն :

ՈՐԴԵՔԻՐ ԿՈՒՍԻՆ

Կ Ա Մ

ԴԱՐՉ ՄԻ

Եւ ամենայն Հողովորեանն տեսեալ, տայր
օրհնութիւն Նստուծոյ :

Ղուկ . 18 : 45 :

Քրիստոս տէրն մեր, որ երիբովի ճամբուն վրայ քիչ մը հողով 'ի ծնէ կոյրին աչքը բացաւ, որպէս զի երկինքին լոյսը տեսնայ, ինձի ալ թոյլ տրվաւ, որ մէկ անսովոր ու մարդկային խելքի

դէմ դիպուածքի մը ականատես ու գլխաւոր վկայ ըլլամ :

Աս անանկ գործք մը պիտի պատմեմ որ աչքովս տեսայ . ու խիտ շատ արժանայարգ վկաներ ալ աս բանս կրնան հաստատել . ըսթրասպուրկի բնակչները պիտի չըկարենան հաւատալ . բայց բոլոր հռովմ քաղաքը աս գործքին վրայ կըզարմանայ : Սէկ խոհեմ ու շատ հարուստ հրէայ մը , որ իր հաւատքին մէջը պինտ հաստատ էր , օր մը եկեղեցի մը մտաւ իրրե պինտգլուխ հրէայ մը , ու աստուածային զօրաւոր շնորհքովը տասը վայրկեանէ ետե եկեղեցիէն դուրս ելաւ իրրե քրիստոնեայ ուղղափառ սրտիւ և կամքով : Յամին 1841 ոչնան մէջը , 'Ասրօլի քաղաքը' Սթրասպուրկցի սղնուական ու մեծահամբաւ երիտասարգ մը եկաւ . որ անկից ալ արեւելք անցնելով իրեն առողջութեանը ու զբօսաւ

նայր Տամար ճամբորդութիւններ պիտի
լնէր: Ըս երիտասարդը իրեն հայրենի-
քէն շատ դժուարաւ զուովեր էր: Վասն
զի ան տեղը աղջկան մը հետ նշանված
էր, ու զանիկայ աչքին պէս կը սիրէր: Ըս
աղջիկը իրեն հօրեղբօրը զուակն էր, բայց
աս ամուսնութիւնը աւելի իրար սիրելով
որոշվեցաւ, քան թէ երկու տանը հաւա-
նութեամբը: Ըս երիտասարդին անունը
Լ. Միսս Կաթիկոյն էր, ու ազգաւ Խա-
րայեւացի էր: Ըսիկայ բարեբաղդ վիճա-
կի մը մէջ գանձվելով միտքը դրեր էր
որ ձեռքէն եկածին չափ իրեն հաւա-
տակիցները նորէն հաստատելու ու աճե-
ցընելու աշխատի, իրեն խելքը միտքը
բոլորովին աս բանիս տըվեր էր, ու ի-
րեն յոյսը աս բանիս վրայ դրեր էր,
վասն զի չէր ուղեր որ հրէից վրայ ե-
ղած ծանր անէծքները լսէ: Արբոր տաս-
ներհինգ տարվան էր, իրեն պինտ ցան-
կալի սւ սիրելի անձը ձեռքէն փախցուց:

որովհետև իրեն եղբայրը (Թէոդորոս Աթաբիպոն դարձաւ ուղղափառ քրիստոնեայ եղաւ, ու ետքնալ քահանայ ձեռնադրովեցաւ: յամանակը չըկրցաւ աս վերքը բժշկել. տարիէ տարի ատելութիւնը աւելցաւ. ու զանիկայ հաւատոյ թշնամի սեպելով չըկրցաւ անոր հետ հաշարվիլ. ու իրեն ազգատոհմին ալ խրատ կուտար, որ չըլլայ թէ անոր հետ հաշարվին:

Թէպէտև Աարօլիին օդը բարեխառն ու զուարճալի է, բայց ան տեղը չըկրցաւ կենալ. ինչու որ՝ միտքը դրեր էր որ արեւելք երթայ. ու անկից ալ իրեն ցանկալի հայրենիքը դառնայ: Իրեք չորս ամսովան մէջ Աիկիլիա, Մալթա, ու Աոսդանդնուպօլիս քաղաքը բոլոր պիտի ժուռ գար. ու 1842 ին ամսովան մէջ նորէն իրեն նշանածին քովը պիտի երթար, ու անոր հետ կարգըվե-

լով իրեն վիճակը ու երջանկութիւնը
հաստատելու կամք ունէր : Աս պատճա-
ռաւ պէտք էր որ ճամբայ ելլեր : Առ-
տու մը տունէն դուրս ելաւ , որ փալէս-
մօ երթալու շոգենաւ մը փնտռէ : Այրոր
ճամբան կերթար՝ միտքը եկաւ որ հռոմ
քաղաքը բնաւ չէ տեսեր , ու մտմտաց որ
իրեն հայրենիքը դառնալէն ետքը , խիստ
դժար բան էր որ նորէն Խտալիայի մէջ
ճամբորդութիւն ընէ . վասն զի պիտի
կարգըվէր , առուտուրի մէջ պիտի մտ-
նար , ու գուցէ իրեն հօրեղբօրը հետ
ընկերութիւն ալ պիտի ընէր :

Աս բաները մտմտալէն ետքը , շիտակ
գնաց կառք մը բռնեց , ու իրեք օրէն
ետքը հռոմ հասաւ : Աայց հռոմ քա-
ղաքը շատ պիտի չընստէր . իրեն մըտ-
քին դրածին վրայ կամքը հաստատ ու-
լալով , տասնըհինգ օրէն ետքը նաբօ-
լի պիտի դառնար : Թէպէտև աս հռչու-

կաւար քաղաքին մէջ շատ սքանչելի բաներ կար տեսնալու ու զննելու, բայց անիկայ բոսիկ մը սուելի ան տեղը չեր կրնար կենալ, վասն զի արևելքը ու իրեն նշանածը իրեն կրսպասէին:

Մ.ս երիասարգը քիչ ստենիսն մէջ բոլոր եկեղեցիները, թանգարանները, աւերակները, կրկեսները, ու յիշատակաց արժանի բաները պատեցաւ տեսաւ ոչ թէ հետաքրքրութեամբ մը, այլ անանկ մէկ յաճարութիւնով մը՝ որ ինչէն պատճառիւք չիհասկըցիլու բան մըն էր: Այս մէկ եղբայր մը ունէի Ալուսգաւ Պուսիէն անուն, բրօթեթաններսն ըիէթիսթ ըսված պղանդէն, և իր կրօնքին վրան շատ հատուտ և նախանձաւոր: Մ.Մ. Բաթիզարոնն ու եղբայրըս մէկ տան մէջ մեծցած ըլլալով հաւատքնին իրարու հակառակ ալ էր նե, սիրտերնին անանկ իրարու հետ կապ:

ված էր որ բարեկամութիւնը երկու-
քին մէջը իբրև բնութիւն եղեր էր :
Եղբայրս շատ ատենէ 'ի վեր կուզեր
այս հրեայն բրօթէսթան քրիստոնէայ
ընել . ասոր վրայօք շատ կըխօսէին .
բայց պտուղ մը ելած չէր . և վիճա-
բանութիւններուն վերջը կըհասկըցընէ
որ երկուքն ալ ինչ մըաքի վրայ էին :
Եւջիոնսը եղբօրբս կատղած կամ խենթ
բրօթէսթան կըսէր . եղբայրս ալ Եւջիոն-
սին խստասիրտ հրեայ կըսէր . հիմա որ
Եւջիոնս չ'ուով գրանըվեցաւ , և եղբօրս
ալ չ'ուով ըլլալը գիտէր , անոր հետ
չխօսեմըված և մնաս բարով չըսած ճամ-
բայ ելլել չուզեց :

Իսկ երբոր գնաց նէ՛ եղբայրս սու-
նը չըգտաւ . վասն զի որսորդութեան գա-
ցեր էր : Իմին տունս եկաւ . ոչ թէ ներս
մտնալու այլ եղբօրս թուղթ մը ձգելու
համար : Վիպուածքը կամ աստուածային

նախախնամութիւնը անանկ բերաւ որ
անոր դիմացը խտաւացի ծառայ մը ելաւ,
ու անոր խօսքը աղէկ մը չըհասկընալով,
զանիկայ մեծ սրահը բերաւ խօթեց :
Ինչպիսի ան ատենը անոր հետ միայն
մէկ հեղ տեսութիւն ըրեր էի եղբօրս
տունը, ու թէպէտեւ ես անոր շատ յար-
գութիւններ ու պատիւներ ըրեր էի,
բայց անիկայ ցուրտ ու անտարբեր կեր-
պով մը իմին բարեւս առեր էր :

Սակայն Առաքելին բարեկամը և Սա-
թիղպօն քահանային եղբայրն էր, և ես
ասոր հետ ալ մեծ բարեկամութիւն
ունիմ : Չեռքէս եկածին չափ Ալֆօն-
սին յարգութիւն ու պատիւ ըրի, ու
անոր հարցուցի թէ ուր տեղմանք պտը-
տեցար, անալ բոլոր իրեն տեսած բա-
ները ինծի պատմեց, ու ըսաւ որ, ին-
ծի անսովոր բան մը պատահեցաւ :
Վարիթօլ թաղը արաչէլի ըսված եկե-
ղեցին մտայ նէ, սրտիս մէջը անանկ մէկ

խորին շարժում մը ու ազդեցութիւն մը
զգացի, որ բերնով չեմ կրնար հասկը-
ցընել : Սառան իմին խոսովութիւնս
տեսնալով, ինծի ըսաւ . ինչ եղար, թէ
որ կուզեսնէ, դուրս ելանք . ես շատ
օտարականներ տեսեր եմ, որ աս տեղս
իրենց սրտին մէջը ասանկ շարժում մը
ու փոփոխութիւն մը զգացեր են :

Ալֆոնսը մտերմաբար աս բանը ինծի
պատմած ատենը՝ կարծես թէ, իմին աչ-
վըներուս ցնծալի նայուածքէն անանկ
կըհասկընար թէ Ղուին Սեզմէ Պիտոր
Ղլաս կըսէի անոր : Ասն զի անիկայ
շուտ մը դարձաւ ինծի ըսաւ թէ աս ազ-
դեցութիւնը սոսկ աստուածպաշտական
իղձ մը նէր և ոչ թէ քրիստոնէական :
Վհօանք իրարու հետ վիճարանութիւն
ընելու . ես կըջանայի որ իմին ուղղափա-
ռական փաստերս անոր մըտքին մէջը խօ-
թեմ . ու անիկայ իմին ջանքիս վրայ կը-

խընտար. և զիս աւելորդ ապաւշտ մարդու
մը տեղ դնելով և բարեմիտ գթութիւն ու
կարեկցութիւն մը ցըցընելով պատաս-
խան տըվաւ, թէ, Հրեայ Օնայ,
Հրեայ Պիտի Մեռնիմ:

Ան առենը միտքիս մէջը անսովոր դա-
ղափար մը կամ երկնաուաք խորհուրդ
մը եկաւ. որ աշխրփիս իմաստունները
զանիկայ յիմարութիւն կրկոչեն:

— Արովհետեւ դուն շատ խելացի ես,
« ու դուն քեզի այսչափ կրվատահիս,
« ըսի, ինձի խօսք կուտաս մի, որ տա-
« լու բանս վրագ կրես:

— Նայեմ ինչ բան է, ըսաւ:

— Միայն աս միտալը. ըսի, ու ան
միջոցին մէջը հրաշագործ կուտին մի-
տալը ցըցուցի: Նեղանալով ու զարմա-
նալով մը ետ քաշվեցաւ:

« Աս ան առենը ցուրտ կերպով մը
« ըսի թէ, ես աս բանը քեզմէ չէի

« յուսար, դուն աս բանին մէջը պէտքեր,
« որ անտարբեր ըլլայիր. ու խմին խօս-
« քըս մտիկ ընելով զիս ուրախացընէիր:
Ալֆոնսը բարձրաձայն ծիծաղելով,
պատասխան տրվաւ: Ասուն զիս աղէկ
չես հասկըցեր, թէպէտև անիկայ ինձի
հարկաւոր չէ, բայց ես քեզի հասկը-
ցընելու համար որ դուք հրէից համար
պինտզլուխ ու կամակոր կըսէք նէ,
սուա կըզրուցէք, ու անոնց անիրաւու-
թիւն ըրած կըլլաք, ես ասիկայ վրաս
կըպահեմ: Մնաց որ դուն ինձի անանկ
զարմանալի բաներ կընես կոր, որ ես
պիտի հարկադրիմ խմին ճանապարհոր-
դական ծանօթութիւններու մէջը մաս-
նաւոր գլուխ մը աւելցընելու ու աս բա-
ները գրելու:

Ալերջապէս այնչափ ծաղրաբանութիւն-
ներ ըրաւ, որ խմին սիրտըս նեղեցաւ.
վասն զի ես զանոնք հստհոյութիւն
կըսեպէի:

Աս ան միջոցին մէջը օրհնած միտալը անոր վիզէն վար կախեցի. քանզի մեր վիճարանութեան ատենը իմին պզտիկ աղջիկներըս միտալին ծակէն խոյթան մը անցուցեր էին : Ասիտ դժուար բան մը կար . կուղէի որ զանիկայ ալ կատարեմ. կըփափաքէի, որ սուրբ Վերնարդոսին ջերմեռանդ աղօթքը սորվի ու բերան զրուցէ :

Անիկայ աս խնդիրքս չընդունեց, ու անանկ կերպով մը ետ կեցաւ, որ կարծես թէ ինծի համար կըսէր : Արաւ որ ասիկայ յանդուգն ու աներես մարդ մընէ : Այց գաղտնի զօրութիւն մը զիս կըդդդէր, որ ես անոր վրայ իյնամ, ու աս բանը անոր առաջարկեմ : Աղօթքին թուղթը անոր երկնցուցի, ու անոր աղաչեցի որ առնէ մէկ տեղ տանի, ու, օրինակէ, վասն զի ես ուրիշ օրինակ չունիմ ըսի :

Ան առեանը իմին տուած նեղութիւնէս խալսելու համար, հեգնական ձևով մը ինձի ասանկ պատասխան տրվաւ :
« Խիստ աղէկ . կըզբեմ : դուն իմին գրա-
« ծըս քովդ պահէ . եսալ քուկին գրա-
« ծըդ կըպահեմ : Ասանկ զրուցելէն ետ-
« քը , սենեակէն դուրս ելաւ գնաց ,
« ու քիթին տակէն ասանկ կըզանգա-
« տէր . Աս ինչ անխոհեմ մարդ է եղեր .
« կուզէի գիտնալ որ՝ թէ որ ես ասանկ
« զինքը բռնադատէի ու տանջէի , որ
« իմին հրէական աղօթքներուս մէկը
« սորվի , արդեօք ինքը ինչ պիտի զրու-
« ցեր ինձի համար : Անիկայ երթալէն
ետքը , ես ու իմին կնիկս խելմը առնն
իրարու երես նայելով բան մը չըխօսե-
ցանք : Անոր ըրած հայհոյութիւններ
ուն համար սիրտերնիս նեղած ըլլալով ,
աստուծոյ աղաչեցինք որ անոր թողու-
թիւն տայ : Աւ մեր երկու պզտիկ աղ-

ջիկներուն ապսպրեցինք, որ իրիկվան
Ողջոյն զրուցեն ու աղօթք ընեն, որպէս
զի աստուած Մլֆոնսին դարձ տայ :

Սուրբ Նեոնարդոսին աղօթքը Մլ-
ֆոնս ինձմէ առած օրէն մինչև որ մայ-
րըն ողորմութեան անոր աչքը բացաւ,
և անիկայ ամէնուն առաջը ուղղափառ
սուրբ հաւատքը ընդունեց նէ աստուած
այնպէս մեծամեծ բաներ բրաւ որ, անոնք
յայտնելու համար թէ իմ բրածներըս և
թէ Մլֆոնսին բրածները մէկիկ մէկիկ
պատմելը ինձի պարտք սեպեցի :

Մլֆոնս թէպէտև իմին թախանձանացս
վրայ շատ կը զարմանար, բայց իմին
տուած զօրաւոր աղօթք* օրինակեր էր,
ու անոր զօրութիւնը հասկընալու համար
զանիկայ խիստ շատ կը կարգար, մինչև
որ բերան սորվեցաւ, ու ամէն վայր-
կեան զանիկայ կը խշէր, ու մտքով ու
բերնով շարունակ կը զրուցէր առանց

Ճանճրանալու երգի մը պէս : Աս երկուքնուս մէջը եղած բաներուն վրայ ես շատ զարմացայ . վասն զի ան մարդուն հետը ես բնաւ ընտանութիւն ու մտերիմ բարեկամութիւն մը չունէի . ու այն օրը առջի անգամն էր որ անոր հետ խօսակցութիւն ըրի :

Աս բնաւ խելքիս մէջը չէի կրնար սղմըցընել ան ներքին ու դաղտնի զօրութիւնը , որ զիս գէպ 'ի անոր կըմղէր , և անոր կողմէն եղած ամմէն արգելքներուն և անոր հակառակելուն ալ չի նայելով՝ որ իմ աշխատանքս անպտուղ պիտի ըլլար , այն դաղտնի զօրութիւնը զիս անբացատրելի կերպով մը կըհամոզէր , թէ ուշ կամ շուտ աստուած անոր աչքը պիտի բանայ : Միտքըս դրի որ անոր ճամբորդութիւնը խափանեմ . իրիկվան ատեն ելայ անոր նստած հիւրանոցը կամ պանդոկը գացի , հետը տե-

սութիւն ընելու : Արբոր զանիկայ չը-
գտայնէ, թուղթ մը ձգեցի, որ հետևեալ
օրը, որ կիրակի էր, առաւօտեան տաս-
նուկէսին իմին տունս հրամմէ զայ : Ըն-
կրիկունը, հոսվմային հոգևոր սովորու-
թեանը կէօրէ, Ս. Ը. Պ. մեծապատիւ
իշխանի, ու մէկ քանի բարեկամաց հե-
տը, Արբութիւն սրբոցին առջևը աղօթք
պիտի ընէի : Ընոնցալ ապսպրեցի որ ին-
ծի հետ մէկ տեղ աստուծոյ աղաչեն, որ-
պէս զի աստուած հրէսցի մը գարձ տայ :

Կիրակի 16 Հունվար :

Ըլֆոնս Աթիզպօնը ըսած ատենըս
եկաւ ինծի այցելութիւն բրաւ, ու հա-
մարձակ կերպով մը ինծի զրուցեց : « Ար-
« յուսամ որ երեկվան պարտպ մտած-
« մունքներդ մէկ զի ձգած ես : Ահայ
« որ հրամանացդ մնաս բարով ըսեմ :

« վասն զի աս գիշեր ճամբայ պիտի ել-

« լամ: Իմին պարսպ մտածմունքներս:

« Ըս խօսքը զրուցելուդ խիստ շատ կը-

« զարմանամ: Բու ճամբորդութեանդ

« խօսքնալ մէյմընալ մըներ, վասն զի

« զանիկայ ութը օր ետքը պիտի ձգես:

« Ընկարելի բան է, կառքը բռներ եմ:

« Սնաս չունի, հիմա քեզի հետ մէկ

« տեղ կերթանք կառավարին կիմացը-

« նենք, որ պիտի չերթաս:

• « Ըս հեղ զիս շատ կըբռնադատես

« կոր, անտարակոյս պիտի երթամ:

« Ընտարակոյս ու ՚ի հարկէ պիտի

« չերթաս, կուզես որ քեզ սենեակիս

« մէջը պահեմ, ու դուռը վրայէդ կղպեմ:

Ընոր սյս ալ ըսի թէ քեզի չըվայ-

« լէր որ, սուրբ Պետրոսի եկեղեցւոյն

« մէջ հանդէս մը ու տօնախմբութիւն մը

« չըտեսնած, ելլաս հռովմայէն երթաս.

« սպասէ քանի մը օրէն ետքը հանդէս

Քր պիտի ըլլայ, զանիկայ տեսնաս : Ա կր-
ջապէս անոր միտքը դարձուցի . ու իմին
յամառութեանս վրայ շատ զարմացաւ .
ու անոր անունը ճամբորդներուն ցան-
կին մէջէն աւրել տալէն ետքը, զանի-
կայ օգոստինեանց ու յիսուսեանց եկե-
ղեցին տարի :

Նոյն օրը պորկեզին պալատը, լաֆէ-
րօննէյ կոմսին հետ օրհասակի վան կե-
րակուրը ուտելէն ետքը, իրիկի վան դէմ
իմին մտմտուկս ու հոգևոր ջանքս անոր
պատմեցի, ու անոր աղաչեցի որ, ան
նորահասակ հրէային համար աղօթք
ընէ : Նս հոգևոր դիտումն իմացանէ,
շատ ուրախացաւ, ու անկեղծութեամբ
մը ինծի խոստովանեցաւ, թէ ինքը միշտ
ամմէն բանի մէջ զինքը սուրբ կոյս ա-
տուածածնայ պաշտպանութեանը յանձ-
ներ էր, ու յոյսը անոր վրայ դրեր էր .
ու քաղաքական մեծ վրդովմանց ատենն

ալ անոր ջերմեռանդութենէն ետ չէր
կեցեր, ու աս աստուածպաշտութեան
գործը ձեռքէ չէր ձգած, որուն օրի-
նակը մեզի ցըցուց իրեն կենացը ետքի
տարիները: Աւ քանի մը հեղ կրկնեց
ու զըուցեց, թէ յոյսդ մի կտրեր. սուրբ
աստուածածնայ ապաւինէ. թէ որ անի-
կայ սուրբ Ներնարդոսին աղօթքը . . .
կըզըուցէ կոր նէ, սուրբ Աստուածա-
ծինը անտարակոյս զանիկայ կըփրկէ,
ու աւելի մեջ հրաշքներ ընելու կարող է:

Արկուշաբթի 17 Յունվար:

Այէս օրէն ետքը Աթիղագօն Ալֆոն-
սը եկաւ զիս առաւ. ու մէկ տեղ նորէն
ժուռ գալու գացինք: Մեր խօսակցու-
թիւններէն պտուղ մը չելլալուն համար
սիրտս շատ կոտորած էր. վասն զի անի-
կայ միշտ մէկ մտքի վրայ կեցեր էր.

ուղղափառութեան արհամարհող ու թշ-
նամի էր, զուարճախօսութեամբ մը իմին
առաջարկութիւններէս խոյս կուտար,
ու չէր ուզեր որ ինձի հետ վիճարանու-
թիւն ընէ: Ափէրրոննէյ կոմսը նոյն
օրը իրիկվան սահաթը տասնըմէկին վախ-
ճանեցաւ, ու իրեն բարեկամացը ու ի-
րեն տրամալից ընտանեացը իրեն առա-
քինութեանց օրինակը ու մեծ մխիթա-
րութիւն մը նալ թողուց, վասն զի անոնք
կըյուսային թէ անտուած զանի իրեն
կանչեց իրրեւ արժանի երկնային դրախ-
տին: Եւստ ժամանակէ 'ի վեր զանի-
կայ հօրս պէս սիրելուս համար, աս ցա-
ւալի դիպուածքիս մէջը անոր ընտանեաց
ողբոցը ու կարևոր զբաղմանցը մասնա-
կից ու գործակից եղայ. բայց Աթիս-
պոնը բնաւ միտքէս չէր ելլեր:

Երեքշարթի 18 Յունվար :

Վիշերվան մէկ մասը Վաֆերրոննէյ-
լին արտասուալից ընտանեացը հետը
անցուցի, որոնք իրաւունք ունէին լա-
լու ողբալու : Ես ամմէնէն տւելի անոնց
ցաւոցը մասնակից ու տեղեակ ըլլալովս,
չէի ուշեր որ անոնցմէ զատվիմ : Բայց
Սաթիսպօն իմ միաքս անդադար մտա-
տանջ խորհուրդ մը կը ձգէր. իբր թէ անե-
րեւոյթ ձեռք մը զիս կը գրդէր, որ Սա-
թիսպօնին քովը երթամ : Սէկ կողմա-
նէ իմին մեռած բարեկամիս մարմինէն
չէի ուզեր զատվիլ . մէկ կողմանէ ալ
չէի կրնար ան նորաբողբօջ հոգիէն հե-
ռանալ, որ կուզէի իմին հաւատքըս դար-
ձընել, ու շահիլ : Իմին ներքին պա-
տերազմս Վաֆերրոննէյլին խոստովանա-
հայր քահանային պատմեցի, որնոր աս-
տուածային նախախնայութիւնը շա-

տոնցմէ ընտրելը ու հաստատելը Վա-
ֆէրրոննէյին տանը մխիթարիչ և պա-
հասպան հրեշտակի պէս ըլլալու : Ղնա
դնա , ըսաւ ինծի , ու աս գործը շարու-
նակէ . պարոն Վաֆէրրոննէյին դիտմա-
նը կամակից ու գործակից կըլլաս . վասն
զի անիկայ ջերմեռանդութեամբ տատու-
ծոյ աղօթք ըրաւ , որ աս երիտասարդը
դարձընէ : Աւստի ևս նորէն վազեցի Աա-
թիսպոնին քովը գացի . ու հաւատքնե-
րու ու կրօնքներու վրայ խօսք բացի ,
որպէս զի կարենամ ուղղափառական ճըշ-
մարտութիւնները անոր միտքին մէջը
խօթել . բայց պարսպ տեղը կըխօրա-
թէի : Աւզեցի որ անիկայ ինծի հետ մէկ
տեղ արաչէլի եկեղեցւոյն նորէն սյցե-
լութիւն մը ընէ : Թէպէտե ան տեղը
ազգեցութիւն մը զգացիր էր , բայց ան
ազգեցութիւնը ու շարժումը շուտ մը
անյայտ եղաւ . վասն զի իմին խօսքերուս

ականջ չէր տար, ու ամեն խորհրդա-
ծութիւններուս կատակարանութեամբ
պատասխան կուտար: « Երբոր Սալթա
« երթամէ, կըսէր, աս բաները ան
« ատենը պիտի մոմտամ. վասն զի շատ
« ատեն կունենամ հոն որ երկու ամիս
« պիտի նստիմ. ու սիրտս նեղանալու
« ըլլայ, ասոնցմով կըզբօսնում: »

Չորեքշաբթի 19 Յունվար:

Ես անոր հետը ժուռ գալով դէպ ՚ի
քարթիթօլը ու հրապարակը գացի: Ըն
տեղւոյն մօտ՝ կելիոսեան լերանը վրայ
մէկ եկեղեցի մը կայ, որ անունը սուրբ
Ստեփաննոս է. ու անոր պատերուն վրայ
Սարտիրոսներուն քաշած զանազան ու
սոսկալի տանջանքները գրված են:
Ստեփիսպոնը ան տանջանքները տեսաւ-
նէ, սոսկալով մը ըսաւ: « Ըն տեսաւ

“ բանը խիստ սոսկալի է իմին միտքըս
“ փոխելու համար : Բայց կուսպաշտ-
“ ները առջի դարերուն մէջ՝ քրիստո-
“ նէից որչափ հալածանքներ ու ան-
“ գթութիւններ ըրինէ, քուկին հաւա-
“ տակից քրիստոնեաներդ ալ ետքի
“ դարերուն մէջ խեղճ հրէաներուն սյն-
“ չափ նեղութիւններ տրվին, ու ան-
“ գթութիւններ ըրին : Աթրանեան սուրբ
Յովհաննէսին եկեղեցին մտանքնէ, ես
անոր տասվերկու առաքելոց արձաննե-
րուն վրայ դրված պատկերները ցըցու-
ցի : Աս պատկերները մէկ կողմանէ հին
կտակարանին պատմութիւնները ու օրի-
նակները կը ձևացընեն, մէկալ կողմանէ
ալ անոնց ՚ի ձեռն մեսիայի կատարումը :
Աս նմանողութիւնները անոր հանձարեղ
գիւտ մը կերեւային :

Ս ենք սկսանք գէպ ՚ի վոլքոնսքիին
ազարակը երթալ : Ասթիսպոնը իմին

որտիս հանդարտութեանը վրայ զարմանալով, ըսաւ. Այս չեմ կրնար հասկընալ, թէ դուն ինչպէս սիրտդ ուրախ ու հանգիստ կը բռնես, որովհետեւ ես միշտ հրեայ պիտի մնամ ըսի, քեզի՞ որ մեծ փափաք ունիս զիս դարձընելու: Այս անոր պատասխան տրվի: Այս խմին յոյսս աստուծոյ խոստմանցը վրայ դրեր եմ, ու աղէկ գիտեմ, որ դուն քու կինն անկեղծութեամբդ ու բարեմտութեամբդ օր մը ուղղափառ քրիստոնեայ պիտոր ըլլաս, կամ աստուած քեզի հրեշտակ մը պիտի խրկէ, որ քեզ լուսաւորէ:

Այս վայրկեանիս մէջը մենք Աբալա Սանթալին (սուրբ Սանդուղիսբին) առջևէն կանցնէինք: (Աւանդութիւնը կը հաստատէ, թէ տէրն մեր Հիսուս Վրիստոս պիղատոսին դատաստանարանը, աս սանդուղիսին վրայէն ելաւ, ու զանիկայ իրեն արեան կաթիլներովը

կարմրցուց :) Աս իմին ընկերս ցըցը-
նալով, ու իմին գլխարկս վար արնե-
լով բարձր ձայնով զրուցեցի :

« Աղջոյն քեզ ո՞վ սուրբ օանդուղիք,
« ահա աս մարդը օր մը ծնկվըններովը
« քու վրայէդ պիտի ելայ :

Ասթիսպօնը սկսաւ բարձր ձայնով
ծիծաղիլ : Անք իրարմէ զատվեցանք,
ու ես չկրցայ բնաւ անոր միտքը դար-
ձընելու կամ խախտելու : Բայց կըհա-
ւատայի տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, որ ըսաւ : Բաղխեցեք և բացցի
ձեզ : Իմին մեռած սիրականիս քովը
գացի, որ ալօթք ընեմ, անոր դագա-
ղին մօտ ծունկի վրայ գալով, որովհետեւ
կըյուսայի որ անիկայ սրբոց բնակարա-
նը գացած է, անոր աղաչեցի որ ինձի
օգնութիւն ընէ, որպէս զի կարենամ
իմին նորահասակ բարեկամս դարձընել :

Հինգշարժի 20 Յունվար :

Ուսմիտպօնը ամենեկին ճշմարտութեան շրմօտեցաւ . կամքը անփոփոխ մնաց . բնութեամբ զուարճախօս ու զբօսասէր էր . ու խելքը միտքը աշխարհային բաներուն տըվեր էր :

Կէս օրվան տտեներ բիացցա տի Ապանիային սրճատունը մտաւ , որ ան տեղը օրագրութիւններ կարգայ : Հոն իմին քեռայրս Ագմոնդ հումանը կըդանայ . անոր ժամանակիս լուրերը կըհարցընէ . բայց այնպիսի փափաքով ու թեթևութեամբ մը , որ ծանր ու աստուածային խոհմունքներէն շատ հեռու էր :

Կէս օրէն ժամ մը կտքը , սուրբ Լէնգրէասին եկեղեցին պիտի երթայի , որպէս զի հետևեալ օրվան համար թաղման հանդիսին պատրաստութիւնը տեսնամ : Ուսմիտպոն գիպուածով ճամբան

գիմացս ելաւ . ուղեց ինձի հետ մէկ տեղ
գալ . ու քանի մը վայրկեան ինձի ըս-
պասելու խօսք տուաւ , որ ետքը մէկ
տեղ ժուռ գանք : Այլեղեցին մտանքնէ,
Ասթիսպոնը պաշտօնին պատրաստու-
թիւնները տեսնալով , ինձի հարցուց թէ
ասոնք որու համար են : Պարոն Ա-
ֆէրրոննէյ անունով մէկ բարեկամ մը
ունէի , երեկ վախճանեցաւ . անոր համար
են ըսի : Անիկայ ան ատենը սկսաւ ե-
կեղեցիին մէջը պըտըտելու . իրեն ան-
տարբեր ու ցուրտ նայուածքը կարծես
թէ կըսէր : « Աս եկեղեցին խիստ ազեղ
է : » Աս զանիկայ եկեղեցւոյն աջ կող-
մը՝ Աֆէրրոննէյին գերեզմանին քովը
թողուցի . ու վանքին մէջը մտայ :

Արօնսուորներուն մէկին խօսք մը ու-
նէի զրուցելու . մեռնօղին ընտանեացը
համար կուզէի վերնատուն մը շինել տալ .
իմին երթալս գալս հաղիւ թէ տասնը-
մէկ վայրկեան քշեց :

Վորէն եկեղեցին մտայնէ, առաջ Սաւ-
թիսպոնը չըտեսայ . ետքը նսյեցայ որ
սուրբ Միքայէլ հրեշտակապետին խո-
րանին առջևը ծունկի վրայ նստեր է :
Վոյլը գացի . ու իրեք չորս անգամ զա-
նիկայ դրդեցի որպէս զի զիս տեսնայ :
Սերջապէս իրեն արտասուալից երեսը
ինծի դարձուց . ու անբացատրելի կերպով
մը ինծի զըուցեց : « ՍՏ . սս պարոն Վա-
սիֆէրրոննէ յը որչափ ինծի համար աղա-
չեց : »

Ես սս հրաշքը տեսայ նէ , շատ զար-
մացայ : Սաթիսպոնը ոտքի վրայ վեր-
ցուցի . ու ձեռքէն բռնելով եկեղեցիէն
դուրս հանեցի . ու հարցուցի թէ ինչ
ունիս . ուր կուղես երթալ : « Սըր կու-
ղես նէ զիս հոն տար . ըսաւ . ես սս
բանը տեսնալէն ետքը քեզի կը հնա-
զանդիմ : »

Ես զանիկայ բռնադատեցի , որ տե-

սածը ինձի պատմէ . բայց անիկայ չէր
կրնար . վասն զի սիրտը խիստ ելեր էր :
Հրաշագործ միտալը ծոցէն հաննց , պա-
գաւ ու արցունքովը թրջնց :

Աս զանիկայ իրեն տունը տարի , և
թէպէտև շատ աղաչեցի , որ բան մը
հասկընամ , բայց անիկայ աս արտասուա-
խառն հառաչանքներէն ու խօսքերէն
ուրիշ բան չըզրուցեց : « Ո՛հ . որ
« չափ աստուած բարի է , աս ինչ մեծ
« շնորհք և երջանկութիւն է : Ե՛ս բանը
« չըզխացողները որչափ ողորմելի են : »

Ատքը հերեաիկոսները ու անհաւատ-
ները միտքը բերելով սկսաւ լալ : Ա կը-
ջապէս ինձի հարցուց , չըլլայ թէ խն-
դեցած ըլլայ : Չէ չէ , բաւ , խեղքս
զլուխս է : Ե՛ստուած իմ աստուած իմ ,
ես խնդ չեմ . ամմեննալ գիտեն որ ես
խնդ չեմ : Արբոր աս անսովոր խո-
վութիւնը ու մտաց յափշտակութիւնը

դադրիլ սկսաւ նէ, Աստիտայոն Աբթոն-
ալ լուսաւոր ու այլակերպ երեսով մը
զիս գրկեց, ու ազաւեց որ զինքը խոս-
տովանահայր քահանայի մը քով տանիմ.
Հարցուց թէ երբ կրնայ մերտիլ, վասն
զի առանց մկրտութեան ալ չէր կրնար
ասորիլ, ու մարտիրոսաց երջանկութեա-
նը կրփափաքէր, որոնց տանջանքները
սուրբ Ստեփաննոսի եկեղեցւոյն պատե-
րուն վրայ տեսած էր: Ինծի ըսաւ թէ
« Ինչպէս որ քահանայէ մը հրաման
« չտունեմ նէ, բան մը չեմ կրնար զրու-
« ցել: Ասան զի զրուցե ու բանս, ը-
« սաւ, պէտք է որ ծունկի վրայ զրու-
« ցեմ: ..

Աս շուտ մը զանիկայ Հիսուսի եկե-
ղեցին տարի. ու հոն Աելֆոր ըսված
քահանային առջևը հանեցի. Աելֆորը
անոր հրամայեց որ տեսած բանը պատ-
մէ: Են տեսնը Աբթոնս իրեն միտալը
կ.

Հանեց պագաւ, ու զանիկայ մեղի ցըցը-
նելով, ըսաւ. Աս Օ, աս Տեսայ. Աս
Օ, աս Տեսայ. Ասանկ ըսելէն ետքը,
նորէն սիրտը ելաւ ու խռովեցաւ : Ասյց
չուտ մը Հանգարտեցաւ, ու աս խօս-
քերը զրուցեց :

« Աշկեղեցիին մէջ վայրկեանի մը շափ
« կենալէն ետքը, մէկէն՛ի մէկ սրտիս
« մէջ անճառելի խռովութիւն մը զգա-
« ցի : Ա՛յվըներըս վեր վերցուցի. բո-
« լոր շինուածքը աչքէս անյայտ եղաւ.
« Խորանին մէկը բոլորովին լուսաւոր-
« վեցաւ, ու ան Խորանին վրայ ճառա-
« գայթնեբու մէջ սուրբ կոյս Վարիամը
« երևցաւ, ոտքի վրայ կեցած, մեծ և
« լուսաւոր կերպարանքով, և լի վե-
« Հափառութեամբ և քաղցրութեամբ.
« Ինչպէս որ աս միտալին վրայ կերև-
« նայ նէ : Ա՛նյաղթելի զօրութիւն մը
« զիս մղեց անոր առջևը տարաւ. Սուրբ

« կոյսը ձեռքովը ինծի նշան ըրաւ ,
« որ ծունկի վրայ գամ . ու կարծես թէ
« ինծի կըսէր . Ասանկ աղէկ է : Անի-
« կայ ինծի հետ չըխօսեցաւ , բայց ես
« ամէն բանը իմացայ :

Ասթիսպոնը աս կարճ խօսքը զրու-
ցած ատենը , շունչ առնելու ու իրեն
սրտին վրդովմունքը չափաւորելու հա-
մար շատ հեղ իր խօսքը կըկտրէր :
Անքանոր խօսքը՝ երկիւղածութեամբ ,
ուրախութեամբ , ու երախտագիտու-
թեամբ մը մտիկ կընէինք , ու աստու-
ծոյ խորունկ ճամբաներուն , ու անոր
ողորմութեանը անճառելի գանձուցը
վրայ կըզարմանայինք :

Բայց խօսքին մէկը՝ իրեն խորհրդա-
ւոր խորութեանը համար մեզ նվելօք
զարմացուց : Անիկայ ինծի հետ չըխօ-
սեցաւ . բայց ես ամէն բանը իմացայ :
Անկից ետքը Ասթիսպոնին խօսքը մի-

այն լսելու էր : Ազդարփառ հաւատքը
անոր սրտին մէջէն՝ փոքրաքանակ ա-
նօթի մը մէջ փակված պատուական ու
անգին խունկի մը պէս, իր գոլորշիքը
գուրս կուտար բոլոր սրտով հաւատացածի
պէս. (կամ լաւես հասկըցընելու համար
ասանկ ըսենք), կատարեալ զգացածի պէս
իրեն երեցած իրական տեսիլքը կը պատմէր :

Մենք Ա իլֆօր քահանայէն զտովե-
ցանք, և աստուծոյ շնորհակալութիւն ը-
նելու համար՝ նախ Սանթա Սարխա մա-
կօր ըսված աստուածածնայ եկեղեցին,
ու ետքնալ սուրբ Պետրոս գայինք :

Իներնով շեմ կրնար բացատրել, թէ
Սանթիսսիմօնը աս եկեղեցիներուն մէջը,
որչափ ուրախութիւն ու զուարճութիւն
զգաց : Ա իմին ձեռքըս սխմելով, կը-
սէր :

« Հիմա կը հասկընամ, թէ ինչու
« համար ուղղափառ ու ընդհանրական

« Եկեղեցւոյ զաւակ Եղող քրիստոնեա-
« ները այսչափ սիրով իրենց Եկեղեցի-
« ները կըսիրեն, ու բարեպաշտութեամբ
« ու ջերմեանդութեամբ զանոնք կը-
« զարգարեն : Աւ բրօթէսթանդները ա-
« նիրաւ ու ծիծաղելի են , որ ուղղա-
« փառները կոտորաշտ սեպելով կըբամ-
« բասնեն : Շատ աղփոր է աս տեղս .
« բնաւ չեմ ուզեր որ ասկից դուրս ել-
« լամ : Ըստ տեղս աշխրբիս չընմանիր .
« արքայութեան կընմանի : »

Ըմենասուրբ Հաղորդութեան խորա-
նին առջևը գնաց 'նէ' աստուածութեան ի-
րական ներկայութենէն կամ տեսութե-
նէն, այնչափ սոսկաց որ, թէ որ անկից շու-
տով չըհեռանար նէ , խելքը գլխէն պի-
տի երթար . վասն զի սկզբնական մեղ-
քով աստուծոյ կենդանւոյ առջևը կե-
նալը՝ իրեն ամօթալի ու սոսկալի բան
մը երևցաւ : Ըստ պատճառաւ՝ գնաց սուրբ

աստուածածնայ խորանին մօտը կայնե-
ցաւ : Աւ ինծի ըսաւ , թէ : « Ըս տեղս
« չեմ վախնար , ու կըղգամ որ , սուրբ
« կոյս աստուածածնայ անհուն ողոր-
« մութիւնը զիս կըպաշտպանէ :

Սուրբ Ըսառքելոց գերեզմանին քո-
վը մեծ ջերմեռանդութեամբ մը աղօթք
ըրաւ : Աւ սուրբ պաւղոսի առաքելոյն
պատմութիւնը ու դարձը անոր պատմե-
ցի նէ , սկսաւ առատ արցունք թափել :

Ասթիսպոն իբրև երախտագէտ պարոն
Ղաֆէրրոննէ , կոմսին զարմանալի սէր
մը տալով , կուզէր որ ինչպան առտու
անոր դագաղին քովը նստի : Բայց Հայր
Սիլֆօրը զանիկայ հոգնած տեսնալով ,
խոհեմութեամբ մը անոր առաքինի ու
հոգևոր փափաքանացը դէմ կեցաւ . ու
անոր խրատ տրվաւ ու ապսպրեց որ
ժամ տասնէն ետքը չընստի : Ըն ատե-
նը Ասթիսպոնը մեզի խոստովանեցաւ ,

Թէ նախընթաց գիշերը բնաւ չէր կրցեր
քնանալ . վասն զի աչքին առջևը մէկ
մեծ խաչ մը կայներ էր մասնաւոր ձևով
մը , ու վրան քրիստոս չըկար : « Հաս
« աշխատեցայ , որ ըսաւ , սա պատկերը
« աչքիս առջևէն վերցընեմ . բայց չը-
« կրցայ : »

Վանի մը ժամէն ետքը դիպուածով
մը հրաշագործ միտային մէկալ կողմը
նայեցաւ , ու ան տեսնը հասկըցաւ որ
իրեն տեսած խաչը անիկայ է :

Եւ միջոցիս մէջը շատ կը փափաքէի ,
որ երթամ Վաֆէրրոննէյին ընտանեա-
ցը հետ նորէն տեսութիւն ընեմ : Վասն
զի անոնց ողբոց ու տրտմութեան մէջը՝
անոնց մէկ մեծ մխիթարութիւն մը պիտի
տայի :

Ուրախութեամբ մը մեռելին սենեակը
մտայ . ամէնքնալ երեսս նայեցան , ու
շարժուածքէս շուտ մը հասկըցան որ

իրենց մեծ ու երևելի բան մը պիտի
զրուցեմ: Մամէնքը մէկ տեղ ետեւս ե-
կան, ու զիս քովի սենեակը տարին,
ես ալ եղած բաները անոնց մէկիկ մէկիկ
սպասեցի:

Աստուծոյ կողմէն առաջադրուած
բոլոր անոնց տրվինէ, անոնց արցունքը
ու լացը մէկէն 'ի մէկ ուրախութեան
ու գոհարանութեան դարձաւ: Աւ ճշ-
մարիտ ու կատարեալ քրիստոնէի պէս,
իրենց տրուած սիրտը աս հոգեւոր մխի-
թարութեամբս քաջալերելով, իրենց սի-
րականին պատուական մարմնոյն վերջին
հրաժարական ողջոյնը տրվին:

Մայր եւ կրօնութայի, որ իմին աս-
տուածագործի նորածին զտակս երթամ
նորէն տեսնամ. քանզի այն օրը անոր
տրտին խռովութիւնը ու շարժումը մեզ-
մէլու համար քովս բարեկամ մը պէտք
ըլլազովք եւ չէի ուզեր անոր քովէն զտու-
վիլ:

Ընոր նորէն հարցուցի, թէ ան սքանչելի երևոյթը ինչպէս տեսար: Ինքը չէր գիտէր, թէ եկեղեցւոյն աջ կողմէն ձախ կողմը ինչպէս անցեր էր. վասն զի խորանը ձախ կողմն էր. ու մեջ տեղնալ թաղում մը շինված էր:

Ինքը զինքը մեկէնիմեկ խորանին առջևը գտեր էր ծունկի վրայ եկած: Ընաջին վայրկեանին մէջ, երկնից թագուհին տեսաւ իրեն բոլոր մեծանշոյլ ու անարատ գեղեցկութեամբը. բայց իրեն աշխրհները անոր աստուածային փայլուն ու պայծառ լուսոյն չըկրցան զիմանալ: Իրեք անգամ ջանաց որ ուղորմութեանց մօրը երեսը նայի ու զանիկայ աղէկ մը տեսնայ, բայց իրեք անգամ ալ իրեն ջանքը պարտալը ելան. աշխրհները չըկրցաւ վեր վերցընել. միայն անոր օրհնած ձեռքերը կրցաւ տեսնալ. որոնցմէ լուսացնցուղ ու հեղեղանման շնորհքներ կը բղխէին:

« Ո՛վ անտուած իմ, կըսէր. ես որ
« կէս ժամ առաջ տակաւին հայհոյու-
« թիւններ կընէի. ես որ ուղղափառ ու
« ընդհանրական հաւատքի դէմ սաստիկ
« ատելութիւն կըզգայի: Ասցց բոլոր
« զիս ճանչցողները աղէկ գիտեն որ,
« մարդկօրէն մտածելով, ես խիստ զօ-
« րաւոր պատճառներ ունէի հրեայ մնա-
« լու: Ամին ցեղս ու ազգատոհմս հրեայ
« է. նշանածս հրեայ է. հօրեղբայրսալ
« հրեայ է...: Այս ուղղափառ քրիս-
« տոնեայ կըլլամ կոր նէ, բոլոր իմին
« շահս, ու աշխարհային յոյսըս մէկ
« զի կըձգեմ: 'ի վերայ սոսր ա-
« մենայնի ես խենդ չեմ. ու ամէնքը
« գիտեն, որ ես խենդ չեմ. ու բնաւ
« չեմ խենդեցած: Արեմն պէտք է որ
« իմին խօսքիս հաւատաք:

Ուրբաթ 21 Յունվար :

Աս երևելի հրաշքիս լուրը սկսաւ
հռովմ քաղքին մէջը հրատարակվելու :
Ամմէնքը իրարու կը պատմէին . ու կը-
հարցընէին . ու որովհետեւ աս պատմու-
թիւնը ամմէն պարագաներովը չէին
լսած , կը տարակուսէին որ չըլլայ թէ
սուտ ըլլայ . ու կը զգուշանային գիւրաւ
հաւատ ընծայելու : Բայց երբոր աս
յայտնի գործքը ու աներկբայելի ճշմար
տութիւնը տեղնիտեղը աղէկ մը իմա-
ցան , իրենց տարակոյսը ու կասկածը
չուտով փորատեցաւ : Ու ամմէնքնաւ
աստուծոյ փառք տրվին ու շնորհակա-
լութիւն ըրին , հռովմ գտնրվելնուն հա-
մար , անանկ ժամանակի մէջ , որ աս-
տուած իրեն անսպառ բարեսիրութեամ-
բը՝ անարատ կուսին զօրաւոր բարեխո-
սութիւնը ու միջնորդութիւնը այսպիսի

սքանչելի կերպով մը մեզի յայտնել ,
ու մեր յոյսը ու ապաւինութիւնը հաս-
տատուել ուզեց : Ամենքնալ կուզէին որ
աս ամեներջանիկ մարդը տեսնան , ու
անոր հետ խօսակցութիւն ընեն . վասն
զի աստուածային շնորհաց մայրը՝ անոր
համար երկնքէն վար իջէր էր :

Եւ Աստիսպոնին հետ հայր Ալէ-
ֆօրին քովը նստած էի , երբոր ճէ-
նէռալ քլարուսքին մեր քովը եկաւ .
ու Աստիսպոնին ըսաւ : « Պարոն դուն
սուրբ կոյս աստուածածնայ պատկերքը
տեսեր ես . ըսէ նայիմ , ինչպէս տեսար : »
Աստիսպոնը անոր խօսքը կտրելով ,
պատասխան տրվաւ : Տէրիմ , դուն ինչ
կրղբուցես . ես աստուածածնայ պատկեր-
քը չըտեսայ , ես նոյն ինքն աստուա-
ծածնայ իրական անձը տեսայ , ինչպէս
որ հոս քեզ կրտեսնամեկ :

Պէտք է որ ես աս տեղս նա բանը քննեմ :

Իմին պատմած բանս , բնութենէ , կրթութենէ , նախապաշարմունքէ , շահու և սիրոյ կիրքերէն առաջ եկած երեւակայական ցնորք մը չէ , ու արտաքին նմանութիւն մը կամ գաղափար մը չէր կրնար անոր պատճառ ըլլալ . քանզի ան խորանին վըսոյ , ուր որ աս հրաշքը եղաւ , ոչ աստուածածնայ արձան , և ոչ պատկերք կար :

Աս ուղեցի որ Աւթիսպոնը Աւփէրոնէ յին տունը ասնիմ , որպէս զի անոր ընտանեացը հետ անանըվի , ու իրեն երևելի դիպուածքը անոնց պատմելով զանոնք մխիթարէ : Ասն զի Աւթիսպոնը իրեն պարտք կըսեպէր , որ ինքը իրեն բերնովը ան արդար հոգւոյն բարեխօսութիւնը , ու իրեն յախտենական երախտագիտութիւնը անոնց յայտնէ , ու անոնց աչաց դառն արցունքը քաղցրացընէ : Բայց Աւթիսպոնին սիրտը

սյնչափ զարմանալի վրդովման մէջ էր որ, շէր կրնար կարգաւորեալ բան մը զըուցել: Արբոր անոնք Սաթիսպոնը իրենց եղբայր կամ սիրելի զաւակ սեպելով, ձեռվընին անոր կերկընցընէին նէ, Սաթիսպոնը չափազանց սիրով մը անոնց ձեռքը կըսխմէր: Արբոր անոր շատ հարցմունքներ կընէին. հաւատացէք ինձի, կըսէր, հաւատացէք իմ խօսքիս. ես պարօն Աֆէրրոննէյին աղօթքովը քրիստոնեայ եղայ:

Ըս նոր քրիստոնեայն մինչև մկրտութեան պատրաստըվելու համար առանձնանալու օրը՝ եկաւ իմ տունս նստեցաւ: Իրեն նշանածին, հօրեղբօրը, ու իրեն տանը, ու աղգականացը թուղթ կըգրէրնէ, ամմէննալ ինձի կըցըցընէր ու կըկարգար, որպէս զի իրեն սրտին մէջինը աղէկ մը հասկընամ:

Սեր մտերմական ու ընտանի խօսակցութեանց մէջը անիկայ միշտ ինձի ա-

նանկ յայտնի ապացոյցներ ու փաստեր
կըցըցընէր, որ նաև աւելի թերահաւատ
մարդիկները կը համոզվին, թէ աս-
տուած անոր անկեղծութեանը ու բարե-
մտութեանը համար, հրաշք մը ըրաւ .
որպէս զի դառնայ, ու ընդհանրական
ուղղափառ և սուրբ հաւատքը ընդունի:

« Խիստ մեծ պատճառներու համար,
« ու խիստ զօրաւոր և բռնադատիչ շա-
« հուց համար, կըսէր, ես իմ հաւատ-
« քէս չէի կրնար զատվիլ: Աւրեմն
« պէտք է որ ամմէնքնալ հաւատան
« ան մարդուն, որնոր ամմէն բանէ կը
« հրաժարի, ու անանկ փաստի մը, որ
« միայն երկնքէն կընայ գալ: Թէ որ
« իմին ամմէն ըսածս ճշմարիտ չէնէ, ես
« խիստ մեծ յանցանք, ու պինտ անխելք
« գործք ըրած կըլլամ: »

« Թէ որ ես աս հաւատքը սրբապիղծ
« ստութեամբ մը սկսելու ու ընդունե-

« Ըուր ըլլամնէ . . . ոչ միայն խմին աշխարհ
« հային վիճակս վտանդի մէջ կը ձգեմ,
« այլնաև հողիս կը կտրանցնեմ, ու խմին
« օրինակիս հետևողներուն սոսկալի մեղ-
« քերնալ իմ վրաս առած կը ըլլամ:

« Մնանկ էնէ, խմին օգուտս ուր է: . .
« Մշտղ . երբոր կը ըսյրս քրիստոնեայ
« կը աւ, ու քահանայ ձեռնադրը վեցաւ-
« նէ, խմին աղգատոհմիս մէջը ինձմ աւե-
« լի զանիկայ հալածող շը կար: Մմէնքս
« տակնու վրայ կը ած էինք . բայց ես
« զանիկայ կանխէի . վասն զի անիկայ
« ինձի թողութիւն տը վեր էր: Արբոր
« նշան վեցայ նէ, ես ինքի բենս ըսի թէ
« պէտք է որ կը բօրս հետ հաշտը վիմ.
« ես անոր քանի մը տող բան գրեցի
« ցուրտ կերպով մը, անիկայ ինձի պա-
« տասխան տը վաւ այնպիսի մէկ նամա-
« կով մը, որ լի էր քաղցրութեամբ և
« սիրով:

« Տասնը ութը ամիս առաջ նորա-
« հասակ քեռորդիիս մէկը վախճանե-
« ցաւ : Իմին քահանայ եղբայրս ուղեց
« որ զանիկայ մկրտէ . ես աս բանը ի-
« մացայնէ , կրակ կտրեցայ :

« Յուսամ որ աստուած ինձի ծանր
« փորձութիւններ պիտի խրկէ , որպէս
« զի իրեն փառք տամ , ու ամէնուն
« հասկըցընեմ , որ ես կատարեալ ու
« ճշմարիտ հաւատացեալ եմ : »

Յիրաւի ճշմարիտ ու անկեղծ հաւա-
տացեալ կրտսեպի ան մարդը , որ քսանը
ութը տարեկան հասակին մէջ , բոլոր
իրեն սրտին զուարճութիւններէն , ու
երկրաւոր կենաց յոյսերէն կը հրաժարի ,
իրեն խղճմտանքը հանդարտելու համար :

Ասն զի անիկայ աս բարի ու հաս-
տատ գիտաւորութեանը համար բոլոր
գլխուն գալու նեղութիւնները յանձը ա-
ռաւ . վասն զի արդէն գիտէր . թէ քրիս-

տոնէութիւնը խաչին պաշտօնն է, ու կրկին և կրկին անգամ անոր իմացուցին քաշելու փորձութիւնները, ու ասնոր հաւատքին բոլոր պարտքերը, որնոր կը փափաքէր ընդունելու :

Արբոր մկրտիլ ուղեցնէ, զանիկայ աստուածահաճոյ ու յարգելի քահանայի մը քով տարի : Ա՛ս քահանան քաղցրութեամբ ու ծանրաբարոյութեամբ մը անոր խօսքը մտիկ ընելէն ետքը, ինչ բաներէ պիտի հրաժարվէր նէ՛ անոնք մէկիկ մէկիկ անոր առջևը դրաւ, և իր սեղանատախտակին վրան դրրված խաչ մը անոր ցրցընելով ան ծանր պարտաւորութիւնները որ պիտի կատարէր, ան մասնաւոր պատերազմները, որոնց մէջը պիտի դանդաղէր, ու ամէն տեսակ փորձութիւնները ու նեղութիւնները, որ աս հաւատքին համար պիտի քաշէր, ամէն նալ հասկըցուց :

Աս խաչը , ըսաւ , որ դուն երազիդ
մէջը տեսար , երբոր մկրտըվելու ըլլաս-
նէ , ոչ միայն ասոր երկրպագութիւն
պիտի ընես , այլ նաև զանիկայ պիտի
կրես : Ատրը աստուածաշունչ գիրքը
բացաւ , եկղէսիաստիկէսին 2 գլուխը
փնտռեց . ու Աթիսպոնին աս խօսքե-
րը կարդաց :

« Արդեակ իմ , երբոր աստուծոյ ծա-
« սայութեան մէջը մտնասնէ , հոգիդ
« փորձութեան ու նեղութեան պատրաս-
« տէ . ու աստուծոյ արգարութեան ու
« երկիւղին մէջը հաստատ կեցիր : Իտ-
« նարհութիւն ըրէ . ու համբերութեամբ
« սպասէ . իմաստութեան խօսքերուն
« ականջ գիր . ու փորձի ատեն արի-
« ութիւնդ ընաւ մի կորսնցընէր . ու
« աստուծոյ սյցելութեանը սպասէ :
« Նայէ որ աստուծոյ հետ միանաս .
« ու յոյսդ մի կտրեր . գլուխդ ինչ որ

« գալու բլլայնէ ամմէննալ սիրով ըն-
« դունէ : Յաւոցդ մէջ սիրտդ հան-
« դարտ բռնէ . ձախորդութեանդ ատե-
« նը՝ համբերութիւն ըրէ . վասն զի
« ոսկին ու արծաթը հրով կըմաքրին ,
« աստուած ալ երբոր կուզէ իրեն ընտ-
« բելոց կարգը անցընել ուղած մարդի-
« կը՝ ձախորդութեան ու ցաւոց բովին
« մէջը կըփորձէ : Աւրեմն աստուծոյ ա-
« պաւինէ . անիկայ քեզ ամմէն չարիք-
« ներէն կըխալցընէ : Հոյսդ աստուծոյ
« վրայ դիր . աստուծոյ երկիւղը սրտիդ
« մէջը պահէ . ու աստուծոյ սիրոյ մէջ
« յարատեութիւն ըրէ : »

Ըստ աստուածային խօսքերը Աստիւ-
պոնին սրտին մէջ խորունկ մը տպա-
ւորվեցան : Ըստ խօսքերը անոր սիրտը
չըկտրելէն՝ ի դատ , անոր գիտաւորու-
թիւնը եվելօք հաստատեցին . ու ան
օրէն սկսաւ կատարեալ ու ճշմարիտ

քրիստոնէութեան վեճակը հասկընալու,
ու լութեամբ մը աս խօսքերը մտիկ
ըրաւ: Այսքը ութը օր մկրտութեալու հա-
մար պատրաստութիւն ու խղճմանաց
քննութիւն ըրաւ առանձնութեան մէջ,
ու իրեն մկրտութեան նախընթաց գիշե-
րը գնաց ան սուրբ քահանայն գտաւ,
որնոր ութը օր առաջ ան աստուածային
խօսքերը կարգացեր էր. ու աղաչեց որ
այն գիրքէն իրեն օրինակ մը տայ.
Վասն զի կուզէր որ քովը պահէ ու ամ-
մէն օր կարդայ ու մտածական ընէ:

Աս աս գործքը կամօք 'ի գիր ան-
ցուցի, որպէս զի ամմէն գիտուն ու խո-
հեմ մարդիկները ասոր վրայ մտածա-
կանմը ընեն:

Ու աս գրութեանս մէջ առանց արուես-
տի պարզութիւն մը, ու անկեղծ հարա-
դատութիւն մը պահեցի, որպէս զի հա-
ւատացեալները շահվին, ու աշխարհասէր

մարդիկները խրատովին ու կրթովին , որոնք որ ճշմարտութեան մէջ իրենց հանդիսար կը փնտռեն : Աւ որովհետեւ ես բրօթեւթանթներուն հակասական ու խաւարամած աղանդներուն մէջը խիստ շատ ատեն մոլորեցայ , անոր համար երջանիկ կը լլամ թէ որ կարենամ աս պարզ գիրքովս , մոլորեալ եղբօր մը կամքը փոխել , ու անոր ըսել տալ , աւետարանական կոյրին պէս : Տէր Աչքս խաց որ Տեսնամ : Այսն զի աղօթք ընօղին ու խնդրօղին աչքը շուտով կը բացվի , ու ուղղափառական ճշմարտութեան արեգակը կը տեսնէ :

Արկուշաբթի 31 Հունվար :

Անզի եղբայր մըն ալ աւելցաւ :

Պարոն Աթիսպոնը մկրտութեան մաքրողական ջրովը նորէն ծնաւ , աչ-

խորհրդէն եկաւ և աւագան խանուն Մարիա
դըրմեցաւ: Մկրտութեան հանդէսէն
ետքը ձայնաւոր պատարագ եղաւ: Ըն
վայրկեանին մէջը՝ թէ որ մէկը աս նոր
ուղղափառ քրիստոնէին ջերմեանդու-
թեամբ աղօթք ընելը ու բոլոր բազմու-
թեան հոգևոր ընկերակցութիւնը ու փա-
փաքը տեսնար նէ, անկարելի էր որ
դարձի չիգար, ու իրեն հաւատքը չը-
զօրանար: Մանաւանդ՝ սուրբ հաղորդ-
ութեան հանդիսաւոր վայրկեանին մէ-
ջը, յորում տէրն մեր Հիսուս Վրիս-
տոս աս նոր ու ջերմեանդ քրիստոն-
եայն անգին ու քաղցր շնորհքներով
լցուց: Մեր սիրելի Մարիա Աթիս-
պոնը սուրբ հաղորդութեան խորհուրդին
առջևը այնչափ յափշտակվեցաւ որ՝
հայր Ալիքօրը ու կնքահայրը ձեռ-
քէն բռնեցին, որպէս զի կարենայ սուրբ
սեղանին քովը մօտենալու, ու սրբու-

Թիւն առնելէն կտքնալ անոր օգնու-
թիւն ըրին, որ ոտքի վրայ ելլայ: Աս-
թիսպոնին երեսէն գետի պէս արցունք
կըվաղէր, ու աստուած անոր սիրտը
այնպիսի անճառելի շնորհքներով ու
հոգևոր ուրախութեամբ լցուց որ, ալ
չէր կրնար դիմանալ:

Այրբոր մէկը աս երիտասարդը տես-
նար, որ քանի մը օր ասաջ յամառ
հրէայ էր, ու ասօրվան օրսալ ուղղա-
փառ ու ջերմեռանդ բրիստոնեայ, ան-
տարակոյս սրաին մէջէն պիտի զրուցէր:
Տէր քու գործքերդ սքանչելի են: Աւ-
աս նոր բրիստոնէին բերնէն ելած խո-
րին խօսքը պիտի յիշէր, որ հրաշագործ
երևումն կտքը ըսաւ: Այս ամիկն բա-
նը խմացայ:

Կտել մը բարեպաշտ անձինք, իրենց
եղբայրական սիրոյն մասնաւոր նշանը
աս նոր բրիստոնէին ցրցընելու համար,

անոր ետեւէն սուրբ սեղանին մօտեցան
ու սրբութիւն առին : Աս հոգևոր միա-
ւորութիւնը ամէնուն շինութեանը պատ-
ճառ եղաւ, ու աս հանդիսին մէջը ամ-
մէնուն աստուածպաշտութիւնը ու ջեր-
մեռանդութիւնը զգալի կերպով մը շար-
ժեց :

Աս հրաշալի ու սուրբ հանդիսիս մէ-
ջը, ամէնքը Ափէրրոննէյին ընտան-
եացը սրտակից բարեկամ եղան. վասն
դի աստուած զանոնք մխիթարելու հա-
մար, մասնաւոր կերպով մը անոնց այ-
ցելութիւն ըրաւ : Ու Ափէրրոննէյին
անուանը յարգելի ու սիրելի յիշատա-
կութիւնը երկնային փառաց ճառագայ-
թի պէս, աս հոգևոր հանդիսին վայել-
չութիւն ու պայծառութիւն մը կուտար :
Ոհ. Պարոն Ափէրրոննէյը որչափ ին-
ծի համար աղաչեց, ըսեր էր իտրայե-
լացին ան վայրկեանին մէջը, յորում

աստուած անոր հողոյն աչքը բացաւ .
վասն զի Ասթիսպոնը աս աստուածա-
հաճոյ ու սիրելի քրիստոնեայն բնաւ
չէր ճանչնար . ու միայն անոր թաղու-
մը ու մահուն սուգը տեսեր էր : Տէր ,
ես քուկին խորին խորհրդոցդ երկրպա-
գութիւն կընեմ : Ատենօք թագաւոր
մարգարէն քեզի կըհարցընէր : Տէր ,
արդեօք գերեզմանին հողը քու անունդ
պիտի խոստովանի , ու քու ճշմարտու-
թիւնդ պիտի պատմէ :

Այո տէր իմ . վասն զի դու արդա-
րոյն աղօթքը լսեցիր . ու ուզեցիր որ
աս ցաւալի հողոյս վրայ լեցուն ձեռքով
երկնային ծաղիկներ սփռես , որպէս զի
քու անուանդ փառք տանք , ու սիրտեր-
նիս չըկոտրենք :

Հիմա ամէն բանը լրմնցաւ : Աս-
թիսպոնը բոլոր ուղղափառ քրիստոնէու-
թեան շնորհքներովը ու ուրախութեամ-

Բը Լըվեցաւ : () ԲՏնութիւն և փառք առ-
տուծոյ , որ մեղի եղբայրմընալ տրլաւ :
Ղաճարանական ու յաղթական երգերը՝
եկեղեցւոյ մէջ կը գոռային , և ինչփանան
վայրկեանը ամէնուն սրտին մէջը փակ-
ված ուրախութիւնը վերջապէս յայտ-
նեցաւ : Աւ բոլոր ժողովուրդը իրեն առ-
տիկ ուրախութենէն բարձր ձայնով գո-
չեց : Տէր մենք քեզ կօրհնենք ու կը-
գովենք :

Աս հանգիստուոր վայրկեանիս մէջը ,
յորում ամէնքը միաբերան իրենց գո-
հարանութեան ու ցնձութեան ձայնը ,
երգեհոններուն քաղցր ներգաշնակու-
թեանը հետ կըխառնէին , մենք ուղղա-
փառքս ուրախութեամբ մը հասկըցանք
թէ ինչպէս բան է երկնային սրբոց
հաղորդութիւնը , որնոր մեղի նոյն օրը
երկնային երջանկութեանը ճաշակը տը-
վաւ : Թէ որ մէկը աս հոգւոր միաբա-

նութեան ու հանրական ջերմեռանդութեան մէջը՝ պաղ ու անտարրեր սրտով կայնեցաւ նէ, այնպիսին ուղղափառ քրիստոնեայ չէր :

Ծափելի Մտուածէն ետքը, կարգինալը Աստիսպոնին ձեռքէն բռնելով նորէն յիսուսեանց վանքը տարաւ . ու կրսն թէ, եկեղեցիէն դուրս ելածին պէս, հայրական սիրով մը գրկեց եկեղեցնայ նոր զաւակը . որ երկնային կենաց հետևող ու ծանօթ եղեր էր :

Աստիսպոնին ուրախութիւնը բերնով չըպատմըվիր : Մամէնքը անոր չորս կողմը շարվեր էին . ու կուզէին որ զանիկայ տեսնան, գրկեն, ու անոր հետ խօսին : Մնիկայ ամմէնուն շնորհաւորութիւնը ու բարեւը կընդունէր . ու քրիստոնեայ ըլլալուն համար ալ, սրտանց կուրախանար, ու շինքը երջանիկ կրսեպէր :

Մէկ ականատես վկայ մը պատմեց թէ, երբոր անիկայ նորէն իրեն առանձնութեան խուցը մտանէ, մէկէն ի մէկ ծունկի վրայ գալով, իրեն քովը եղած խաչելութեան պատկերին երկրպագութիւն բրաւ. ու Տիսուս փրկիչին շնորհակալ եղաւ, իրեն այնչափ մեծ շնորհքներ տալուն համար:

Աս գեղեցիկ ու երջանիկ հանդէսիս մէջը գանբովողները ամեքնալ խրատվեցան, ու աս մեծ մխիթարութիւնը զգացին իրենց սրտին մէջը, թէ, Արբոր զաստուած անկեղծութեամբ ու հաւատարմութեամբ փնտռենք նէ, շուտով մեզի կուգայ, ուստր համար հրաշք մը ընելու պարտական կըլլայ:

Արբոր աստուած իրեն հայրական սիրով՝ իրեն ընտրեալ ծառայից մէկ անսովոր շնորհք մը կըխրկէ, որով մարդուս հաւատքը նորէն կըհաստատուի,

ու սիրտը անպատմելի սիրով կըլնցվի ,
ան ատենը մարդս կուզէ որ իրեն տա-
ղաւարը կամ վրասնը ան ներքին ու հո-
գևոր զուարճութեան մէջը հաստատէ ,
ու անոր արտադրիչ ու հաստատիչ պատ-
ճառնալ ձեռքէն չըփակցընէ :

Ըյսպէսալ Աւթիսպոնը կուզէր որ
առաքելոց ուզածին պէս միշտ թափորա-
կան լեռանը վրայ մնայ : Արովհետև աս-
տուծմէ մեծ շնորհքներ առեր էր , ու
իրեն անցեալ թշուառութիւնները հին
լաթի մը պէս վրայէն հաներ էր , ու
մկրտութիւնով ստացած անմեղութեամ-
բը զարդարվէր էր , որոյ մաքրափայլ
պայծառութիւնը՝ շուտով կանցնի , ան
պատճառաւ , առանձնութեան կրփափա-
քէր , աշխրբիս գովութիւններէն կրվախ-
նար , ու ամմէն հետաքրքրական զբաղ-
մունքներէն հեռանալ կուզէր , ու սր-
տին վրայ գրեթէ կնիք մը զարկեր էր ,

որպէս զի շնորհաց գանձերը, որնոր
աստուած իրեն օրտին մէջը գրեր էր,
անկից բնաւ դուրս չելան :

Արժաւիարէր որ զբօսանաց ու բարե-
կենդանին օրերը առանձնութեան մէջ
անցընէ : Արդեօք անիկայ ինչ աչքով
կընայէր աշխրբիս յիմարական ուրա-
խութիւններուն, ու սնտաի զբօսանքնե-
րուն վրայ : Ան մարդը, որ արժանի
եղաւ խորհրդաւոր վարդը, երկինքին
պինտ աղվոր ծաղիկը տեսնալու, իրեն
նորածին հաւատովը ու ջերմեռանդու-
թեամբը, ու իրեն աստուածասէր երախ-
տագիտութեամբը ու հոգևոր զուարճու-
թեամբը կըլզար. թէ աստուած որչափ
քաղցր է :

Իսկ ասնոր առանձնութիւնը չսկսած
(որ շնորհակալութեան կրթութիւն մը
պիտի ըլլար) մէկ ուրիշ հոգևոր պարտ
մընալ ունէր կատարելու, կամ թէ

մէկ նոր երջանկութիւն մը կար որ համը պիտի առնէր : Աւ սուրբ եկեղեցւոյն սիրելի զաւակը ըլլալէն ետքը՝ կրփափաքէր որ ժամ մը առաջ սրբազան քահանայապետին ոտքը համբուրէ . որ մրրկածուփ ալէկոծութեանց դէմ դնելով մեզ ամէնքս փրկութեան նաւահանգիստը տանօղ նաւակը հաստատ ու ապահով ձեռքովը կրկառաւարէ :

Աթիսպոնին ու սրբազան Պապին իրարու հետ տեսնելիլը բոլոր իրեն ոգեշարժ ու օգտակար պարագաներովը աս տետրակը կարգացօղներուն աղէկ մը հասկըցընելու համար պէտք է որ ուղղափառութեան խիստ պատուական յիշատակները միտքերնին ձգեմ : Վաթաքօմպէն ու հոովմայի կրօնական հնութիւնները տեսնօղները , միտքերնին թող բերեն , որ խիստ շատ տեղ բարի հօլիւին պատկերքը տեսեր են . յորում

բարի հովիւր՝ իրեն մոլորեալ ոչխարը
գիրկը առած փարախը կըտանի. ու աս
պատկերքովս բարի հովիւին հայրախը-
նամ սէրը ու հեղութիւնը խիստ աղէկ
խմացեր են. վասն զի հին դարուց պատ-
կերհանները շատ վարպետութիւնով
զանիկայ նկարագրեր են: Թէ որ մէկը
աս սիրալիր ու օգտակար տեսարանս
աղէկ մը հասկընալ կուզէ նէ, թող
ան ոգեշարժ ու ազգու պատկերքը աչ-
քին առջևը բերէ:

Հիսուսեանց կարգին ընդհանրական
մեծաւորը՝ Պ. Սաթիսպոնին, ու Պ.
Թէոդորոս Պուսսիէրին առջևը ընկաւ,
ու զանոնք սրբազան քահանայապետին
առջևը հանեց:


Պ. Սաթիսպոնը, ու Պ. Թէոդորո-
սը իրենց անսովոր ու խորին յարգու-
թիւնը ու սէրը ցըցընելու համար, Սրբա-
զան քահանայապետին իրեք հեղ խորին

խոնարհութեամբ համբոյր մատուցին ,
ու անոր սուրբ օրհնութիւնը առին , որ
ջերմեռանդ ու բարեպաշտ քրիստոնեա-
ները հեռու անդերէն , կուգան ու կը-
խնդրեն :

Արբաղան քահանայապետը երկուքին
հետալ խօսակցութիւն ըրաւ , ու ինչպէս
որ մէկ գորովագութ ու օրդեսէր հասը
մը իրեն սիրելի զաւակները սիրով կը-
զրգուէնէ , այնպէսալ սրբաղան քահա-
նայապետը իրեն չափազանց սիրոյն
նշանները անոնց ցըցուց : Հրամայեց
որ զանոնք իրեն ներքին ընակարանը
տանին պարտցընեն , ու ետքը անոնց
տակի քաղցր ընտանութիւն մը ցըցընե-
լով , զանոնք իրեն առանձնութեան սեն-
եակը տարաւ :

Ըն ատենը սուրբ պետրոս առաքելոյն
յարգելի յաջօրդը յայտնի կերպով մը
երկուքին ալ իմացուց , որ ինքը իրեն

յոյսը սուրբ կոյս աստուածածնայ պաշտ-
պանութեան վրայ դրեր է . ունակ սուրբ
աստուածածնայ աղօթք կրնէ իրրև օգ-
նական քրիստոնէից : Աւ ինքը սրբազան
քահանայապետը իրեն ձեռքովը հրա-
շագործ կուսին պատկերքը անոնց ցո-
ցուց . որ իրեն անկողինին քովը դրել
է . ու մասնաւոր յարգութեամբ ու ջեր-
մեռանդութեամբ մը զանիկայ կը պաշ-
վէր . ու անոր առջևը սրբութեամբ ու սրտի
մտօք աստուծոյ կաղաչէր , որպէս զի ամ-
մէնքը մի հօտ և մի հովիւ ըլլան : Աւ եր-
ջապէս սրբազան քահանայապետը ա-
նոնց երթալու առանձն իրեն յարգելի
ձեռքովը Աւթիսպոնին իրրև յիշատակ
մէկ աղփօր խաչ մը պարգևեց , որ մաս-
նաւոր ներոգութիւններ ունէր :



Վ Լ Ի Ե Ր Ը Կ Լ Ե Ն Վ Կ Լ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ո Լ Ե Թ Ի Ի Ս Պ Ո Ն Ի Ն

Հրէութենէ դառնալուն, ու քրիստոնեայ ըլլալուն:

Սեր ընթերցողքը կրօնական շահախնդրութեամբ մը թող կարդան ահա հռոմայէն եկած վսեմափառ փոխանորդ կարդինալին վճիռը, որն որ Լւիսնսոս Սարիամ Ասթիսպոնին կատարելապէս ու շուտով հրէութենէ դառնալը, ու ուղղափառ քրիստոնեայ ըլլալը՝ կը հաստատէ, ու կը յայտնէ:

« Յանուն աստուծոյ, ամէն:

« Յամի տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի 1842, և սրբազան

տեառն մերոյ ժղ Վրիգորի պապին քահանայապետութեանը 12 երրորդ տարին, ու Յունիսի 3 ին :

Ս սեմապատ ու մեծապատիւ Աստղանդին Նաթրիցի, որն որ հսովմ քաղքին մէջը Սրբազան Պապին ընդհանրական փոխանորդն է, ու հռոմայի արդարութեան դիւանին դատաւորն է, անոր առջևը եկաւ երեցաւ Յարգոյապատիւ Պրանչիսկոս անիվիթթին, փոխանորդութեան ատենին (դանձապետական) ուղղիչ կառավարը, որն որ վսեմապատ փոխանորդ կարգինալին կողմանէ մասնաւոր կերպով մը ընտրվեր էր, որպէս զի հարցուփորձ քննութեամբ մը վկաներէն աղէկ մը հասկընայ ու ստուգէ այն հրաշալի դիպուածքը, որուն համար որ ըսթրասպուրկցի արխոնսոս Սարիամ Նաթրիսպոն անունով հրէսց մը (որ ան ատենը հռոմայի մէջ էր, ու

քսանը ութը տարեկան երիտասարդ մը նէր) դարձեր, ուղղափառ քրիստոնեայ եղեր էր, ամենաուրբ կուսին բարեխօսութեամբը: Ա կրոյիշեալ յարգոյապատիւ Մնիվիթիին յայանեց եթէ ինքը ամենայն փութով, ճշութեամբ ու սիրով իրեն յանձնըված պաշտօնը կատարեր էր. ու ինք վկաներու զատ զատ սլլեսսլ հարցմունքներ ըրեր էր. ու ամենքնալ միարեւան համարձակութեամբ ու երեսպարզութեամբ միենոյն պատասխանը իրեն արվեր էին. ու ամենքը միակերպ հաստատէր, եթէ աս հրաշալի գիպուածքս բոլոր իրեն պարագաներովը՝ ստույգ ու ճշմարիտ է: Աս պատճառաւ անիկայ իրեն կարծեացը հետեւելով կը հաստատէր, եթէ աս գիպուածքս անտարակոյս հրաշք մընէ: Ի վերայ այսր ամենայնի վսեմափառ փոխանորդ կարգինալին յանձնեց, որ-

պէս զի բոլոր ծանօթութիւնները , վկայ-
ութիւնները , հարցմունքները , ու պա-
տասխանները աղէկ մը քննէ . ու ետ-
քը աստուծով որոշ վճիռ մը գրէ :

Աստի վսեմափառ կարդինալը աս պատ-
մութիւնը ուշադրութեամբ մը մտիկ
ընելով , ու վկաներուն տրված ծանօ-
թութիւնները , պատասխանները , ու բո-
լոր դատաստանական ձևով եղած հարց-
մունքները աղէկ մը քննելով , ու աս
գիպուածքիս բոլոր պարագաները , ուղ-
ղագատ ու խոհեմ աստուծաբաշտու-
թեամբ մը կ'ընելով , ու շատ աստուա-
ծաբաններուն , ու բարեպաշտ ու եր-
կիւղած մարդոց հետ խորհրդակցելով ,
(ինչպէս որ Տրիդենտեան ժողովքը կը-
հրամայէ , գլ. 25՝ Յաղագս կոչման և
յարգութեան սրբոց , և յաղագս նշխա-
րաց և պատկերաց նոցին) յայանի ու
որոշ կերպով մը վճռեց , եթէ Ալփոնսոս

Ս. Աթիսպոնին հրէութենէ կատարե-
լապէս ու շուտով դառնալը, ու ուղղափառ
քրիստոնեայ ըլլալը ճշմարիտ ու երևե-
լի հրաշք մընէ, որն որ ամենամեծ և
ամենաբարին աստուած ըրաւ ամենօրհ-
նեալ սուրբ կոյս Արեմայ աղօթիւքը :

Աւ որովհետև աստուծոյ գործքը
յայտնելը ու հրատարակելը աղէկ ու օգ-
տակար բան մը նէ, (տորիթ . 12)
վսեմափառ կարգինալը հրաման տրլաւ
որ աստուծոյ փառացը համար, ու հա-
ւատացելոց ջերմեռանդութիւնը աւելցը-
նելու համար սուրբ աստուածածնայ վրայ
աս երևելի հրաշքիս պատմութիւնը տպ-
վի, ու ամեն տեղ տարածվի :

« Ա յսեմափառ փոխանորդ կարգինա-
« լին ու դատաւորին պալատին մէջը
գրված, վերոյիշեալ տարւոյն, ամսոյն
« ու աւար թուականովը :

Ա . փոխանորդ կարգինալ
« Աամիլլոս Տիամիլլա . նօտ . փոխան .
« Համեմատ բնագրին :
« Հոլսեփ . կանոնիկոս թարնաստի .
« քարտուղար .
« † կնիքին տեղը : »

Մենք ուրախութեամբ մը մեր ընթեր-
ցողացը կրճանուցանենք և թէ Մ. Վիոնսոս
Ս . Սաթիսպոնը զարմանալի բարեպաշ-
տութեամբ մը սուրբ աստուածածնայ
ցըցուցած ուղիղ հաւատքին մէջը հաս-

տատ կեցեր է : ԱւաստուածաՏաճոյ
առաքինութեամբ մը աշխարհքէս հրա-
ժարելով ու աւետարանին պատուէրը
բանելով, իրեն ստացուածոցը ու հարս-
տութեանը մէկ բաժինը աղքատներու
բաշխեց . ու մէկալ բաժիննալ տրվաւ
որ եկեղեցի մը շինվի . ու տուն մը նալ
հրէութենէ դարձող ու բրիտանեայ
եղող նորահասակ աղջիկներուն ու ման-
չերուն համար . ու ինքնալ դպրատու-
նը մտաւ քահանայ ըլլալու գիտաւո-
րութեամբ . ու աստուծոյ շնորհօքը հրէ-
ից մէկ նոր առաքեալ մը ըլլալու հա-
մար : Ենքալ երախտագիտութեամբ
Աստուծոյ գոհութիւն տանք ու ըսենք :
Այս է Արրոգունն Աջոյն Աարձրելոյ :

Ա Ե Ր Պ Յ :



